

ՀԱՄԱԴԾՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ

ԳԵՂԵԿԻՆ ՄԻՋՆԵԿԵՐԻ ԳՈՐ. ՀԱՅ ԱԽՈՅՆՈՂԵՐԻ ՀՐՄԵՐ

Կողմանց

ՆԵՐՍԻ ՔԱՀԱՆԱՅ ԴԱՄԱՁԵԱՆՑ

ԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԲԿԻՖՈՒՆԻ ԿՐԿՐՈՎԱՓԱԼԱՆ ԱԽՈՅՆՈՂԱՆԻ

Թ Ի Գ Լ Ի Զ

ՌԱՊԱՄԻՒԱ ՄՌ. ՄԱՐՏԻՐՈՍԱՄՆԵՐԻ.

Միքայելեան վաղոց, № 81

1901

Յ Ա Ն Կ

ԵՐԻ

Ա. Ա. Հոգու դալրւստը և Մատաթիայի ընտրութիւնը	5
Բ. Քրիստոնեայ նոր հաւատացեալները և եօթն սարկաւագաց ընտրութիւնը.	6
Գ. Նոր եկեղեցու հայած անքը և ս. Ստեփաննոսի նահատակութիւնը.	8
Դ. Սոզոսի դարձը և Սիմոն մոզը.	11
Ե. Արդար Հայոց թագաւորը ս. Թաղէոսապարակալից քրիստոնէութիւն է ընդունում .	13
Զ. Ա. Թաղէոս և Բարդուղիմէոս առաքեալներ, ս. Սանդուխտ կրտսի և Աղդէի նահատակութիւնը	15
Է. Ա. Լուստուրչի ծնունդը և կրթութիւնը .	18
Ը. Հոբիսիմեանք և Գայիանեանք.	21
Թ. Ա. Գրիգորի քարոզութիւնը և ձեռնադրութիւնը	24
Ժ. Ա. արիստակէս և Վրդանէս հայրապետները	26
ԺԱ. Ա. մեծն ներսէս	31
ԺԲ. Ա. Սահակ պարթե, ս. Մեսրովը և հայոց տառերի գիւտը	34
ԺԳ. Ա. Ցովսէփ կաթողիկոս և Ղեղնդեանք. .	40
ԺԴ. Ա. Վարդանանց դօրավարների նահատակութիւննը	45

2816(09)

Դ-29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՏՎԱԿՆԵԱԾ Է 1961 թ.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՆԵԿՈՐԻ ԴՊԲ. ՀԱՅ ՈՒՍՏՈՂՆԵՐԻ ՀԵՄԱՅ

Կազմեց

ՆԵՐՄԵՍ ԺԱՇԱՆԱՅ ՂԱՄԱԶԵԱՆՑ

Կրօնուսոյց Թիֆլիսի երկրաշափական ուսումնարանի:



ԹԻՖԼԻՍ

Արագատիպ ՄՆ. Մարտիքոսնանցի.

Միքայէլեան փողոց, № 81.

1901

Дозволено Ценз. Тифлисъ 15 Сентября 1901 г.

A II
5609

ՆՈՐԻՆ ԳԵՐԱՊԱՏԻՈՒԹԵԱՆ

ԵՐԵՒԱՆԻ ՓՈԽԵՆՈՐԴԻ

Ա. ՍՈՒՔԻԱՍ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍԻ

b h u u q b s b

ԽՈՐԻՆ ՅԵՐԳԵՆԵՐԸ ՆՈՒԷՐ

Կ Ա Զ Ա Մ Ո Ղ Ա Ւ Ց

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱԴՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ՀՈԴՈՑ ԳԵԼՈՒՍՏԸ ԵՒ ՄԱՏԵԹԻԵՑԻ
ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.

Ա.

Յիսուս Քրիստոսի համբարձումից յիտոյ,
նորա առաքեալները և աշակերտները ժողովուեցան
Երուսաղէմ, Յուղայի տեղ աշակերտներից
մէկին ընտրելու, տասներկու առաքեալների
թիւը լրացնելու համար։ Վճռեցին այսպէս.
աշակերտներից երկուսին—Մատաթիային և
Բարսարային բերին և ժողովի առաջ կանգնեցրին։ Սպա առաքեալները միասին ազօթեցին
և խնդրեցին Սստծուց, որ յայտնէ ինքը թէ
առաքելական պաշտօնի համար. երկուսից որն
է արժանաւորը. աղօթելուց յետոյ վիճակ ձգեցին և վիճակն ընկաւ Մատաթիային։ Նրանից
յետոյ, բոլոր առաքեալները և հաւատացեալնե-

ըլ, ժողովուած էին վերնատանը, և սպասում էին խոստացեալ Սուրբ Հոգու գալստեան։ Երբ որ հասաւ Պենտեկոստէի (50-րդ) օրը յանկարծ երկնքից սաստիկ ձայն լսուեցաւ և քամու պէս մի զօրութիւն զգացուեցաւ ու լցուեցաւ այն տանը, որտեղ ժողոված էին բոլոր հաւատացեալները, առաքեալները և Տիրամայրը, որոնց թիւը 120-ից աւելի էր։ Նրանց վրայ երևցան հրեղէն լեզուներ և խկոյն առաքեալները լրցուեցան Հոգով Սրբով և սկսեցին ամեն մինը զանազան լեզուներով խօսել և քարոզել հեթանոսներին։

Բ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՆՈՐ ՀԵՒԾԵՑԵԱԼՆԵՐԸ ԵՒ
ԵԹԹՆ ՍԵՐԿԱԿԻԵԳՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.

Հին ժամանակները սովորութիւն կար, որ երուսաղէմում, Պէնտէկոստէի տօնին, ամեն երկրից մեծ քաղմութիւն էր հաւաքւում թէ տօնախմբութեան համար և թէ մեծ առետրի համար, որ լինում էր ամեն ազգերի մէջ։ Պետքոս առաքեալը՝ միւս առաքեալների հետ, Ս. Հոգուց զօրացած սկսեց հրապարակաւ ազատ

քարոզել և պատմել զանազան լեզուներով Քրիստոսի չարշարանքը, մահը, յարութիւն և բռնօր անօրէնութիւնները. այնպիսի հրաշալի լեզուով, որ նորա բարրառելու մասին զարժացան և նոյն օրը, քրիստոնէութիւն ընդունեցին մինչև Յազար հոգի։ Մի օր, Պետրոս և Յովհաննէս առտքեալները ինն ժամին ցերեկով գնում էին տաճարը աղօթելու, դրան մօտ նստած էր ի ծնէ կաղ. Նա Պետրոսից ողօրմութիւն խնդրեց, Պետրոսն ասաց, ես փող չունիմ, բայց ինչ որ սւնիմ այն կըտամ քեզ. «Յիսուսի անունով տսում եմ քեզ «Վեր կաց և գնա»։» Եյս ասելուն պէս կազը վեր կացաւ և բազմութեան առաջ անցկացաւ գնաց։ Հեթանոսներից և հրեաներից շատերը այս հրաշը տեսնելով, մնացին շուարած և փառք տուին Աստծուն. Նոյն օրը հինգ չազար հոգի նոր հաւատացեալներ աւելացան։ Առաքեալների քարոզութեան և հրաշըների շնորհիւ երուսաղէմը նոր հաւատացեալներով շատացաւ Նրանց բարոյական վարք ու բարքը նախանձելի էր, ամենայն օր ջերմեռանդ աղօթքով էին անցկացնում իրենց կեանքը, մի հաւատով, սիրով և յուսով մխիթարւում ու ոգեւորւում էին. Նըրանց բոլոր հարստութիւններ և կերակուրը հասարակաց էր. նոր հաւատացեալները իրենց կալուածները ծախում, և բոլոր

արծաթ և ոսկին բերում էին և յանձնում տ-
ռաքեալներին։ Եւ ՚երանք էլ բաժանում էին կա-
րօտեալներին։ որովհետեւ ՚որ հաւատացեալնե-
րը օր ըստ օրէ բազմանում էին այդ պատճա-
ռով առաքեալները ընտրեցին եօմն բարեպաշտ
երիտասարդներին, ձեռնադրեցին ՚որանց սար-
կաւագ, կարգեցին ՚որանց ՚որ հաւատացեալ-
ների վրայ կառավարիչներ և սուրբ սեղանի
սպասաւորներ, սեղանի վրայ կատարում էր
սուրբ խորհուրդը և ապա այն հացից բաժան-
ում էր բոլոր հաւատացեալներին։ Այնուհետեւ
առաքեալները շտապեցին Յիսուսի պատուէր-
ների համտձայն զնալ և քարոզել ամենայն տեղ
հեթանոսներին։

¶

ՆՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱԼՎԾԱՆՔԸ ԵՒ ՍՈՒՐԲ
ԱՏԵՓԱՆՆՈՍԻ ՆԱՇԱՑԱԿՈՒԹԻՒՆԸ

Առաքեալների հրաշագործութիւնները և
քարոզութիւնները օրէց օր աւելացնում էր քրիս-
տոնէից թիւը։ Դորա համար հրէից քահանա-
յապետները վեասվում էին իրենց ժողովուրդը

պակասելով և նախանձում էին և սաստիկ հակառակ էին։ Սկզբում դպիրները պատուիրեցին, որ այլիս շքարողեն Աւտարանը, սպառնալով հակառակ դէպրումը բանտարկել։ Բայց առաքեալները աներկիւղ և համարձակ շարունակում էին իրենց պաշտօնները։ Նորա բանտարկուեցան, սակայն Աստուծու հրամանով մեծ հրաշքով աղատուեցան և կրկին շարունակեցին իրենց պաշտօնը։ Քահանայապետները բողոքեցին դատարանին՝ կամենալով դատապարտել բոլոր առաքեալներին։ Ատենակալներից մէկը Գամաղիէլ անունով իւր կարծիքը յայտնեց ատեանումը ասելով՝ «Թողէք այդ մարդկանց և թոյլ տուէք աղատ իրենց գործը շարունակել, եթէ գորանց արարքը մարդկային է և կեղծ, չուտով կխափանուի, իսկ եթէ Աստուծու անունով են գործում, ի գուր էք հալածում, գուցէ Աստուծամարտ լինիք»։ Գամաղիէլի այս խօսքերից հրէտները լռեցին, և ծածուկ պատուիրեցին, որ այլ ևս շքարողեն։ բայց առաքեալները ամեն տեսակ հալածաներներ ուրախութիւնով ընդունում էին, և ամենին պատասխանուու էին, «Աստուծուն աւելի պիտի հնազանդինք քան թէ մարդկանց»։ ուստի աւելի եռանգով շարունակեցին իրենց պաշտօնը։ Ս. Ատեփաննոս սարկաւազը որ առաջինն էք իւր գործունէութիւնովը և

հրաշքներով, Աստծու փառքի նախանձրվ լրցուած միջտ նախատում էր ամբարիչտ հրէաներին։ Դպիրները տեսնելով նորա ազատ քարոզութիւնը, բողոքեցին դատարանին ասելով թէ զա հրէաների հաւատը հայհոյում է։ Կատաղած խաժամուժ բազմութիւնը Ատեանից դուրս գալուն պէս, սկսեցին հալածել, ծհծել և անպատուել. սակայն ս. Ստեփաննոսը հրապարակի մէջ ասելով «Յիսուս նազովրեցի, մի համարիր դոցտ մեղքը, որովհետեւ չեն խմանում ինչ են զործում»։ Այսպէս աղօթելիս տպէտ ժողովուրդը հալածում էր և քարկոծեցին և իրեն հոգին Աստծուն աւանդեց, առաքեալները տարան թաղեցին։ Արեան առաջին կաթիլները, որ թափուեցաւ Քրիստոսի սիրոյն համար, Ստե. փաննոսն էր որ զոհուեցաւ Քրիստոսի փառքի համար։ Հայաստանեայց ս. եկեղեցին սրբերի հետ զասեց, և ամենայն տարի յիշատակում է նորան, նախասարկաւագ և առաջին մարտիրոս Քրիստոսի։

Դ

ՍՈՂՈՍԻ ԴԱՐՁԲ ԵՒ ՍԻՄՈՆ ՄՈԳԲ

Սուրբ Ստեփաննոսի Նահատակութիւնից յետոյ, հաւատացեալների հալածանքը շատացաւ, այնպէս, որ շատերը թագնում էին, ոմանք դիւդ կամ ուրիշ քաղաք էին փախչում։ Նոյն միջոցին փարիսեցի մի երիտասարդ Սոզոս անունով, սաստիկ հալածում էր քրիստոնէաներին, մինչև անզամ մտնում էր տները թէ՝ թագկացածներին և թէ փողոցներում պատահած մարդ թէ կին տանում բանտարկում։ Որպէս զի աւելի մեծ դործ կատարէ։ Սոզոսը հրաման տռաւ քահանայապետներից և վեաց Դամասկոս, որ այնտեղից ևս շատերին կապած բերէ երուսաղեմ։ Երբ մօտենում էր քաղաքին ճանապարհին երեեցաւ մի հրաշալի լոյս և նորա շորս կողմը պատեց և լոյսից վայր ընկաւ գետին և մի ձայն լսեց, «Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ ես հալածում ինձ, ես եմ Յիսուս»։ Սաւուղը այս ձայնից սարսափած հարցրեց, «Ճէր ինչ ես կամենում։ Ճէրը ասաց, զիա՞ Դամասկոս և գտիր այն տեղ Անանիա անուանեալին և նորանից մկրտուիր։ Սաւուղը Ճիրոջ պատուերի

համաձայն զետք, Անանիայից մերտուեցաւ, ընդունեց Սուրբ Հոգու շնորհը, սովորեց Քրիստոսի անօրէնութիւնը, սկսեց քարոզել Աւետարանի և եղան զիխաւոր առարեալներից մէկը, Սամարիայում Փիլիպոս սարկաւազը, Պետրոս և Յովհաննէս առարեալները քարոզում էին, զրոշմի խորհուրդը ևս կատարում էին, զրոշմի խորհուրդը ընդունողները անմիջապէս ստանում էին սուրբ Հոգու շնորհը, Եյդ Ժամանակ Սամարիայում մի մող կար, որ կախուրդութիւնով էր պարապում, երբ նա տեսաւ որ առարեալները ձեռք դնելով հաւատացեալները ստանում են երկնային պարզեներ, ինքը ևս մօտ զետք առարեալներին արծաթի առաջարկեց, որ իւր վերայ ևս վաճառեն այս իշխանութեան շնորհը, Պետրոս առարեալը քարկանալով՝ «Առածու շնորհը արծաթեալ չէ վաճառւում» Աւրեմն արծաթեալ հոգեւորական դարձողը կոչւում է Սիմոնական կամ Սիմոնականութիւն։

Ե

ԱՐԴԱՐ ՀԱՅՈՑ ԹՎԵԸՆԵՐԻ ԹՎԵԹԵՌՈ ԱՌԱ-
ՔԵԱԼԻՑ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ Է ԸՆԴՈՒՆՈՒՄ

Արշամի որդի Արդար թագաւորը, իսր աղ-
զական Արտաւազի որդոց մեջ անբաւականու-
թեան պատճառով զնաց Պարսկաստան որ նո-
րանց հաշտեցնի, երբ վերադարձաւ իսր եղե-
սիտ մայրաքաղաքը մի անբուժելի ցաւ ստա-
ցաւ, որից ոչ մի բժիշկ չկարողացաւ ազատել,
չումայեցաց աւրութեան առաջ ամբաստանել
էին Արդարին իրը թէ ասպատմբելու մորով է
զնացած եղել Պարսկաստան, ուստի Եղեսիոյից
զետպանելու ուզարկեց Մարիանոս զօրծակա-
լին իրեն արգարացնելու համար։ Արդար թա-
գաւորի զետպանելոր Երուսաղեմ հանելով տե-
սոն Քրիստոսի հրաշագործ բժշկութիւնները
և լսեցին նորա քարոզութիւնները, Վերադար-
ձին պատճեցին Արդարին թէ՝ Երուսաղէմում
մի երկնային մարդ կայ, որ տռանց դեղի բր-
ժը կում է կոյրերին, կաղերին և բորոտներին։
Արդարը հրաւիրագիր ուզարկեց Եխուսին և
խնդրեց, որ շնորհ բերէ իսր մօտ և բժշկէ իրեն։
Գետպանների ձեռքով հրաւիրաթուզիթը ուզար-

կելով՝ յատկապէս պատուիրեց Անանէին, որ
եթէ Յիսուս շրաբեհաճի գալ, զո՞նէ նորա պատ-
կերը հանեն ու բերեն։ Երբ պատգամաւորները
հասան Երուսաղէմ, առաքեալների ձեռքով Ար-
դարի թուղթը հասցրին Յիսուսին։ Յիսուսը
նամակը կարդալով՝ պատուիրեց Թովմաս առաք-
եալին պատասխան զրել, թէ ինքը շուտով պի-
տի զնայ իւր ուղարկողի մօտ իսկ իւր համ-
բարձումից յետոյ աշակերտներից մէկին կու-
ղարկէ, որ երժայ բժշկէ նրան։ Ուղարկուած
նկարիչն աշխատում է Փրկչի կենդանագիրը
նկարելու, բայց չէր յաջողւում, Յիսուսը այդ
նկատելով մաքուր կտաւ վեր առաւ զնելով իւր
երեսի վերայ, տպաւորեց իւր պատկերը և
տուաւ նկարչին։ Դեսպանները Քրիստոսի գաս-
տառակը բերին Եղեսիա և յանձնեցին թագ-
ւորին։ Քրիստոսի Համբարձումից յետոյ եկաւ
ս. Թաղէսս առաքեալը Եղեսիա իջևանեց Բագ-
րատունի Տուրեայ իշխանի մօտ, որը ընդունեց
քրիստոնէութիւն, և ապա Արդարին բժշկեց և
մկրտեց։ Այնուհետեւ Արդար թագաւորի հրամա-
նով մեհանները և կռատունները քանդուեցան
և ամեն տեղ հաստատուեցան քրիստոնէական
հաւատը։ Արդարը նամակներ զրեց Հռովմայեց-
ւոց Տիրերեա կայսեր։ պարսից Արտաշէս և Սո-
րոց ներսէն թագաւորներին, խոստովանելով

Քրիստոսի Ըստուածութիւնը և համոզում էր, որ նրանք ես ընդունեն և հաւատան։ Սրգարը բժշկուելուց յետոյ երեք տարի ապրեցաւ և նորա նամակները անուշադիր չմնացին։ Թաղէոս առաքեալը հիմնեց այնտեղ եկեղեցիք և թագաւորական թագ շինող Աղդէին ձեռնազրեց Եղեսիայի համար առաջնորդ։ իսկ ինքը գնաց դէսի վերին Հայաստան Սրգարի քեռորդի Սանատուկի մօտ, որը իւր զերդաստանով ու ժողովրդով քրիստոնէութիւն լընդունեց։ Այնտեղ էլ մի բարեպաշտ մարդու Զաքարեա անունով եպիսկոպոս ձեռնադրեց և նոցա համար կարգեց առաջնորդ, իսկ ինքը գնաց Աղուանքի կողմերը։


9

Ա. ԹԱԴԵՈՍ ԵՒ ԲԱՐԹՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔԵԱԼ-ՆԵՐԻ, ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՒՍԻ ԵՒ ԱԴԻԵՒ ՆԱՀԱՑԱԿՈՒԹԻՒՆԸ

Սրգարի մահից յետոյ, յաջորդեց նորան իւր որդի Ծնայնէն, նա ուրացաւ քրիստոնէութիւնը, Ծնանէն Աղդէին խնդրեց, որ իւր համար մի նոր թագ հիւսէ, բայց Աղդէն մերժեց

ասելով, թէ ուրացեալ ժագուռի համար չար-
ժէ թագ շինել։ Եյս խօսքի համար սաստիկ
բարկացաւ Անանէն, և իսկոյն չարաշար սպան-
նել առւեց Ադրէին, ինքն էլ Աստծոց շուտով
պատժուեցաւ։ Իւր պալատի սիւները նորոգել
տալիս սիւնը քանդուեցաւ և տակը մնալով
մեռաւ։ Այնուհետեւ բոլոր Հայաստանին տիրեց
Արդարի բեռորդի Սահատրուկը։ Սա Արդարի
ազգատոհմը ջնջեց և հրամայեց բոլոր հպատակ-
ներին, որ կրկին կռապաշտութիւն ընդունեն։
Թաղէոս առաքեալլ, որ այդ ժամանակ Կապա-
դովիկիայումն էր շուտով վերադարձաւ Հայա-
տան։ ճանապարհին նորան պատահեցան հռով-
մայեցի հինգ դեսպաններ, ո. Թաղէոսը նորանց
ո. Աւետարանը քարոզեց, նորա սիրով ընդունե-
ցին քրիստոնէութիւն։ Բոլորին մկրտեց և նո-
րանց գլխաւորին քահանայ ձեռնադրեց, որի
անունը Ուկի էր բոլոր ընկերները նորա անու-
նով կոչուեցան Ուկեանք։ Ա. Բարթուղիմէոս
առաքեալլ ո. Ըստուածածնայ թաղմանը ներ-
կայ չէր, կրր եկաւ Երօւսաղէմ՝ կամեցաւ տես-
նել ո. կուսի գամբարանը. երբ որ առաքեալ-
ները բաց արին տապանը, տեսան որ նորա
մարմինը վերափոխուել է։ Ա. Բարթուղիմէոսին
մի կերպ մխիթարելու համար, տուին ո. կուսի
պատկերը, որը նկարած էր տախտակի վերայ։

Այդ պատկերը և մի քանի քան բերեց Հայաստան, եկեղեցի շինեց Հոգեաց գաւառումը և ո. կուսի պատկերը այնտեղ բազմացրեց, այդ վանքը կոյսերի մենաստան դարձաւ։ Սանատրուկը, երբ կռապաշտութիւն մտցրեց, շատերը չէին ընդունում. դրանց թւումն էին Սանդուխտ արքայադուստր, իւր հաղարապետը և Ռոկնանքը։ Սանատրուկը սորանց ստիպեց, որ քրիստոնէութիւնը ուրանան. բայց նորա ընդդիմացան. Սանատրուկը սաստիկ բարկացաւ և հրամայեց բոլորին չարաշար նահատակել, մինչև անգամ ո. Բարդուղիմէոսին մորթաղերծ արեց (տիկ հանեց). Աւետարանի լոյսը, որ տարածուեցաւ Արգարի ժամանակ, Սանատրուկից սկսեալ օրըստ օրէ իշխանութեան միջոցով քրիստոնէութիւնը հալածուեցաւ և հեթանոսութիւն տարածուեցաւ։ Զեայելով բռնաւոր իշխանութեան հալածանքներին քրիստոնէութիւնը շատ տեղ զաղտնի պաշտում էր մինչև ո. Գրիգորը:



Ե

Ա. ՀՈՒՍԱԿՈՐՉԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Պարսից Արտաշիր թագաւորը յաղթուելով
Հայոց Խոսրով թագաւորից, շատ էր ցանկա-
նում, որ մի հնարքով սպանել տար Հայոց թա-
գաւորին. Նա սպանողին խոստանում էր Հայոց
վերայ իրեն օգնական կարգել. Սուրէնեան Շնա-
կը յանձն առաւ այդ շաբագործութիւնը կա-
տարել. 266 թ. եկաւ Հայաստան իրր ապրս-
տամբուած Արտաշրի դէմ և նորանից հալած-
ուած և ապաւինեց Հայոց Խոսրով թագաւորին:
Խոսրովը Շնակին իրր իւր տոհմակից մեծ պա-
տուով ընդունեց Վաղարշապատուած. Շնակը
Ռդուհի կնոջից մի դաւակ ծնեց 267 թ. որը
յետոյ եղաւ Հայաստանի Լուսաւորիչ. Գարնան
ժամանակ, մի օր Շնակը ցանկացաւ Խոսրով
թագաւորի հետ որսի զնալ, առաջուց նախա-
պատրաստուած նա առանձնացրեց Հայոց թա-
գաւորին և մահացու վէրք տուեց Խոսրովին:
Մինչ իւր ընտանիքով Շնակը փախչում էր,
Հայոց զօրքը հասաւ և նա երասխ զետը ընկ-
նելով խեղդուեցաւ. Խոսրով դեռ չվախճանուած

հրամայեց, որ Անակի ցեղը բոլորովին ջնջեն.
այս կոտորածից Անակի երեք տարեկան ման-
կան մահից ազատեց իւր ծծմայր քրիստոնեայ
Սովիան, որը փախցնելով Կեսարիա մկրտել
տուեց և անուանեց Գրիգոր։ Սա դաստիարա-
կուեցաւ մեծ զգուշութիւնով և առաքինի վար-
րով, Հելլենական քարձր կրթութիւն ստացաւ,
և 18 տարեկան հասակում ամուսնացաւ մի
քարեպաշտ քրիստոնեայ Դաւիթ անունով մար-
դու գտեր Մարիամի հետ։ Ամուսնութիւնից
ունեցան երկու զաւակ Վրթանէո և Արիստա-
կէո։ Ամուսնութիւնից երեք տարի յետոյ փո-
խադարձ համաձայնութիւնով միմեանցից բա-
ժանուեցան։ Մարիամը իւր հետ առաւ Արիս-
տակէսին և դաստիարակեց նորան քրիստոնէա-
կան հոգւով։ Վրթանէսին Գրիգորը յանձնեց
դայեակի խնամքին։ Գրիգորը արդէն տեղեկա-
ցել էր իւր հօր չարազործութեան մասին, և
այն պատճառով մտաւ ծառայութեան Խոսրովի
որդի Տրդատի մօտ, իւր հօր Անակի մեղքերը
բաւելու։ Երբ Անակը սպանեց Խոսրովի թագա-
ւորին, Պարսից Արտաշիրը տիրեց Հայաստա-
նին և ջնջեց Խոսրովի ցեղը, միայն մանուկ
Տրդատը և իւր քոյր Խոսրովիգուխտը ազա-
տուեցան մահից Օտա Ամատունի նախարարի
ձեռքով։ Տրդատին տարան Հռովմ Լիկիանոս

զօրապետի մօտ զինուորական կրթութիւն ստացաւ և արտաքոյ կարգի քաջութիւններ գործեց։ Դոթաց Հռչէ թագաւորին սպանեց և Թիոկղէտիանոսից արքայական փառքով ու մեծ զօրքով զնաց Հայաստան իւր հօր աթոռը ժառանգելու, հալածեց թշնամիներին և ամուսնացաւ Ալանաց արքայադուստր Աշխենի հետ։ Երբ Տրդատը փառքով Հռոմից Հայաստան էր դալիս, Գրիգորն ևս հետն էր ծառայական պաշտօնով։ Երբ հասան Եկեղեցաց գաւառի Երիգառաւանը 286 թ. իւր յաղթութեան յաջողութեան պատուավ ցանկացաւ զան մատուցանել Հայոց Անահիտ շաստուածուհուն։ Հրամայեց Գրիգորին որ ծաղկեայ պսակ մատուցանէ իւր կողմից Անահիտի արձանին։ Գրիգորը հրաժարուեցաւ այս հեթանոսական պաշտամունքից, և յայտնեց որ ինքը քրիստոնեայ է։ Տրդատը աշխատեց զանազան խոստումներով և սպառնալիքներով համոզել, որ նա ուրանայ քրիստոնեութիւնը, բայց երբ տեսաւ Գրիգորի հաստամտութիւնը, սկսեց ամեն տեսակ տանջանքներ տալ։ Տանջանքներով ևս չյաջողուեց Գրիգորի հաւատափոխութիւնը, այն ժամանակ Տրդատը սաստիկ բարկացաւ մանաւանդ երբ իմացաւ, որ իւր հօր սպանողի որդին է եղել և հրամայեց Գրիգորին ձգել Արտաշատ քաղա-

քի մահապարտների գորը—Խոր-Գիրապ 286
—301 թ.,

Ը

ՀՄԻՒՓԵՄԵԱՆՔ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆՔ

Հռիփսիմէ ս. կոյսը Հռովմէական կայսերական ցեղից էր, նա դաստիարակուում էր կուսանաց վանքում Գայիանէ մայրապետի հռվանաւորութեան տակ, պարկեշտութիւնով, յառաջադիմութիւնով և գեղեցկութիւնով գերազանցում էր իւր բոլոր ընկերներից։ Քրիստոնէական աստուածաշտութիւնով և միշտ ազօթքով էր անցկացնում իւր ազատ ժամերը։ Մայրապետը տեսնելով նորա վառ հաւաաը, հրեշտակական վարքը, Հռիփսիմէի սրարանոցից կախեց փրկչական խաչի մասը։ (Եյս մասունքը Գայիանէն ստացել էր Կղօտեայ կայսրից Հռիփսիմէի ծնողից)։ Հռովմայեցւոց Դիոկղէտիանոս կայսեր հրամանով նկարիչները տէրութեան մէջ դանուող աղնուական և գեղեցիկ աղջիկների սպառկերներ էին նկարում, որ ցոյց տան կայսրին և որին հաւանէր նրան թագուհի հրա-

վիրէր։ Նկարիչները, գնալով ս. Գայիանէի
վանքը և տեսնելով Հռիփսիմէ կուսի գեղեց-
կութիւնը սրանչացել էին, շուտով նկարեցին
պատկերը և տարան ներկայացրին կայսեր։
Դիոկղէտիանոսը հաւանութիւն էր տուել և հրա-
փիրել էր Հռիփսիմէին իւր պալատը։ Սակայն
Հռիփսիմէն վճռել էր շամուսնանալ, միայն Քրիս-
տոսին հարսնանալ։ Սուրբ Գայիանէն և Հռիփ-
սիմէն վճռեցին փախչելով ազատուել թաղա-
ւորի մտադրութիւնից։ Ուստի մօտաւորապէս
70 կոյսի միաբանութիւնով, մի քանի քահա-
նաների և բարեպաշտ մարգկանց հետ ծածուկ
փախան Հռովմից։ Նախ և առաջ դիմեցին ե-
րուսազէմ, տհօրինական տեղերը համբուրեցին
յետոյ Եղեսիա հասան, մի քանիսը այնտեղ
մնացին կրօնաւորուեցան, ոմանք լեռները մը-
նացին ճգնուելու։ Իսկ Գայիանէն և Հռիփսի-
մէն մի քանի ընկերներով գնացին Վարագայ
լեռը։ Սուրբ Հռիփսիմէն վախենում էր մի զու-
ցէ կորցնէր ս. խաչափայտը, նոյն սարի զա-
գաթումը ամփոփեց, երկու քահանայից հոկտ-
զութեան տակը և նորա մինչև մահը մնացին
այնտեղ։ Սր. Հռիփսիմեանը 37 հոգւով Վաս-
պուրականից անցան Արտատեան աշխարհ,
բնակեցան Վաղարշապատ քաղաքի մի հնձա-
նում, որ իւրեանց ձեռագործով ապրում էին։

Երբ իմացաւ Դիովզէտիանոսը, որ Հռիփսիմեանք փախել են իւր երկրից սաստիկ բարկացաւ և ամեն տէրութեան նամակներ գրեց, որ այսպիսի մի գեղեցիկ աղջիկ փախաւ իմ երկրից՝ խնդրեմ, որտեղ զտնէք վերադարձուցէք ինձ։ Այս նամակներից ևս ստացաւ Հայոց Տրդատ թագաւորը. իսկոյն խուզարկեց ամեն տեղ և գտաւ իւր քաղաքումը։ Անմիջապէս տանել տուեց իւր պալատը և հիանալով նրա գեղեցիկութիւնից առաջարկեց իւր ձեռքը։ Բայց ս. Հռիփսիմէն հաստատ մնաց իւր ուխտին և մերժեց։ Ճատ աղածեց-խնդրեց թագաւորը, բայց ոչ մի կերպ չկարողացաւ համոզել, Հռիփսիմէն շրեղ պալատը թողեց և փախաւ մտաւ իրենց հեծաներ։ Տրդատը սաստիկ դայրացաւ և հրամայեց ոչ թէ միայն Հռիփսիմէին նահատակել, այլ միարանութեան չարաշար կոտորել։ Նահատակների թիւն էր 37, որ կատարուեցաւ 301 թուին։ Նահատակների մարմինները ինն օր բացօթեայ թափուած էին։ Բայց Տրդատը այսպիսի անիրաւութեան համար անպատիծ շմնաց Աստուածանից։ Նա մոլեզնացաւ, կորցրեց իւր բանականութիւնը և արքայական գահը թողած՝ թափառում էր խելազարի նման։

ավագի ու առ պատճենահամբ օգոստու դժմ
ու նույն քառակա ըլլի ու ան անհամ ուստ
ածու ութիւնու մուտքան մաս և առ մ առ
Ա. Գրիգորի ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԶԵՄՆԵ-
ԴՐՈՒԹԻՒՆԸ

Բաղմաշարչար Ա. Գրիգորի Սատուածային
զօրութիւնով՝ տասնշորս տարի կենդանի և ողջ
մեաց խորվիրապի մէջ։ Սատծու օգնութիւնով
մի բարեպաշտ կին կերակրում էր նորան։ Նա-
խախնամութիւնը խղճալով Հայոց ազգին կա-
մեցաւ Ա. Գրիգորի միջոցով, Հայաստանին լոյս
սփռէ, և նորանով կռապաշտութեան խաւարը
հալածուի և Հայոց ազգը կրկին քրիստոնէա-
կան լուսով պայծառանայ։ Տրդատի քոյր Խոս-
րովիստուխոտը տեսիլքում երազեց, որ Ա. Գրի-
գորը կենդանի է։ շուտով ուղարկուեցաւ Օտա-
նախարարը և մեծ պատուով բերին Վաղար-
շապատ։ Թագաւորից սկսած մինչև վերջին ռա-
միկը ծունը էին դնում և երկրպագում։ բայց
Գրիգորը արգելում էր ասելով՝ ես էլ ձեզ նման
մարդ եմ։ Սատծուն երկիրապաղէր և փառարա-
նեցէր երկնքում։ Ա. Գրիգորի առաջին դործն
այս էր, որ ինն օրուայ քացօթեայ թափուած
նահատակուած կոյսերի մասունքները հաւա-
րեց և իւրաքանչիւրին առանձին առանձին ամ-

փոփեց: Ա. Գրիգորը վաթսուն և հինգ օր ո.
Եւ հտարանն էր քարողում բոլոր ժողովրդին,
տեսիլքում տեսաւ միաձին Ցիսուսի իջումն
Վաղարշապատ քաղաքը, և աաճարի ձեակեր-
պութիւնը. իւր տեսիլքը պատմեց բոլորին և
անմիջապէս շրջապատեց տաճարի տեղը և կանգ-
նեցրեց ո. Խաչը: Տրդատը ընդհանուր ժողով
կազմեց և Գրիգորին միաձայն ընտրեցին Հայ-
րապետ: Տրդատը մեծ պատուով նախարարնե-
րով և պարզեներով՝ ո. Գրիգորին ուղարկեց
Կիսարիա ո. Թաղէոսի յաջորդ Ղեռնդիոս պատ-
րիարքի մօտ, որից ձեռնադրուեց եպիսկոպոս
և քահանայապետ Հայոց աշխարհի. Ղեռնդիոսը
ընծայեց ո. Ցովհաննու Կարապետի և Ամա-
նագինէ եպիսկոպոսի մասունքը: Ա. Գրիգորը
վերադառնալով Տարօն՝ յաղթեց քրմերին, կուռ-
քերի մեհանները քանդեց, եկեղեցիներ հիմնեց
և ամփոփեց որբերի մասունքը այնտեղ և տո-
նեց ո. Կարապետի յիշատակը, հետը քերեց
Ընտօն, Կրօնիպէս և Զենոր ճգնաւորներին ձեռ-
նադրեց և կարգեց նոցա առաջնորդ: Ա. Լու-
սաւորիչը Աշտիշատում ևս կռատունների փոխա-
նակ եկեղեցիք հիմնեց և այնտեղ մկրտեց իւր
բոլոր ուղեկիցներին և այնտեղի բնակիչներին,
այնտեղի համար ևս ձեռնադրեց և նոր հովիւ-
ներ կարգեց նոր հաւատացեալների վերայ: Ա.

Դրիգորը երբ հասաւ Բագրեանդ գաւառը, Տըրդատը և Աշխէն թագուհին և մեծ բազմութիւն առաջ էին եկել հանդիպելու և պատուելու։ Հանդիպելիս մեծ սիրով և ուրախութիւնով ընդունեցին նորան, և Եփրատ գետի մէջ, բոլոր եկողները մկրտուեցան։ Երբ մտաւ Վաղարշապատ, ո. Դրիգորի առաջին դորձն էր տաճարի շինութիւնը։ Թագաւորի և բոլոր ժողովրդեան օգնութիւնով կառուցին եկեղեցի և անուանեցին Էջմիածին։ Նոյնպէս Հռիփոխմէի և Գայիանէի գերեզմանների վերայ կառոյց վկայարաններ։ Չեռնագրեց բազմաթիւ եպիսկոպոսներ, քահանաներ, դպրոցներ բացաւ, և դպրութիւն տարածեց, ամեն տեղ և բոլոր Հայաստանում քրիստոնէութիւն տարածեց, և քրիստոնէական ուսումնական լուսաւորեց հայ ազգը։

Ժ

Ա. ԱՐԻՍՏԱԿԵՍ ԵՒ ՎՐԹԱՆՔԵՍ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Դրիգորը Հայաստանը լուսաւորելուց և ամեն ինչ բռիկարգելուց յետոյ առանձնացաւ Դարանագեազ գաւառի Սեպաւհ լեռով, ուր

ճգնած էր ս. Հռիփսիմէի ընկերակից Մանեայ կոյսը և անտեղ նուիրեց իւր անձը աղօթքի և խիստ ճգնութեան։ Տրդատի և նախարարների հաւանութիւնով Կեսարիայից հրաւիրեցին ս. Գրիգորի փորբ որդի Արիստակէսին, ուր կրօնաւորական կեանք էր վարել, խնդրեցին ս. Գրիգորին և ձեռնազրեց եպիսկոպոս 320 թուին, որպէս զի ս. Գրիգորի բացակայութեան ժամանակ տեղապահ լինի։ Այս միջոցին 325 թ. Արիոսեան աղանդի հարցը արծարծուեց Հռովմէական տէրութեան մէջ, որի համար մեծ Կոստանդիանոսի հրամանով նիկիա քաղաքում տիեզերական ժողով գումարուեցաւ, ուր ներկայ էին 318 հայրապետներ։ Ս. Գրիգորի փոխանակ Արիստակէս հայրապետն էր ներկայ Նոյն ժողովին, ուր հաստատեցին հաւատոյ հանդանակը և ուրիշ կանոններ։ Հանդանակը բերեց և իւր հօրը ս. Գրիգորին ցոյց տուեց, որը ընդունեց և այս խօսքերով վաւերացրեց։ «Իսկ մեք փառաւորեսցուք, որ յառաջ քան դյաւիտեան երկիրպաղանելով սրբոյ երրորդութեան և միոյ Աստուածութեան հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն»։ 331 թ. ս. Գրիգորը բոլորովին հրաժարուեցաւ իւր պաշտօններից, զնաց ընակուեցաւ Սեպոն լիառը Մա-

նեայ կուսի ճգնարանը, որտեղ մի քանի ժամա-
նակից յետոյ վախճանուեցաւ աշխարհից հեռու,
որպէս զի իւր կեանքի վերջին օրերը փառք և
պատուից հեռու պահէ։ Բարի հովիւները դրտ-
նում են նորա մարմինը և թաղում են նոյն
այրի մէջ։ Նորա մահուանից յետոյ յաջորդում
է իւր փոքր որդին Արխատակէսը 332 թ. Նա
ևս իւր հօր նման, հոգ տարաւ եկեղեցիների
բարեկարգութեան և պայծառութեան համար,
շատ տեղեր ուր եկեղեցիք չկային նորերը հիմ-
նեց, մենաստաններ, վարժարաններ հիմնեց։
Հայոց աշխարհի վերակացու Արքեղայոս իշխա-
նը իւր վատ վարրի համար միշտ նկատողու-
թիւններ էր ըստանում հայրապետից, իշխանը
շտանելով՝ այդ յանդիմանութիւնը սրով սպա-
նեց և փախաւ. եօթ տարի միայն Հայրապե-
տութիւն արաւ, և նորա մարմինը ամփոփեցին
թիլն աւանում։ Հայոց ազգը, ո, Գրիգորի մեծ
երախտիքը ի նկատի ունելով՝ աշխատում էր,
որ միշտ ազգի հայրապետը նորա ազգից ընտ-
րեն, ուստի ընդհանուր հաւանութիւնով հրա-
ւիրեցին նորա մեծ որդի Վրթանէսին և կար-
գուեցաւ ազգի հայրապետ։ Սա ևս նախանձա-
խնդիր լինելով՝ իւր հօր և եղրօր շաւզով ըն-
թացաւ. ինչ տեղ եկեղեցական և աղքային թե-
րի գործեր կային աշխատեց լրացնել և մի քա-

նի կանոնները մտցրեց եկեղեցիներում։ Այն միջոցին Սղուանից աշխարհից խնդրել էին իւրեանց համար առաջնորդ, ուստի Տրդատ թագաւորի համաձայնութիւնով ձեռնադրեց իւրորդի Քրիզորիսին կաթուղիկոս Վրաց և Սղուանից վրայ, Որովհետեւ Վրացիք նունէ ս. կուսի քարօգութիւնով ընդունել էին քրիստոնէութիւն, ուստի հարկաւոր էր նոցա հովիւներ, որ մկրրտութեան խորհուրդը կատարէին։ Ս. Քրիզորիսը իւր պաշտօնի մէջ աշխատում էր, որ աւելի ազգէ և իշխաններին զգուշացնէ հեթանոսական կեանքից և շատերին յանդիմանում էր անարժան զործերի համար։ Իշխանները շատնելով Հայրապետի յանդիմանութիւնները չարաշար նահատակեցին և թաղեցին Ամարաս աւանում 342 թ։ Ս. Վրթանէսը Տրդատ թագաւորի մահուանից յետոյ մեծ տառապանքներ էր կրում պարսիկներից, ինքը անձամբ գնում է Յունաց կայսեր մօտ և թագաւորեցնում է Տրդատի թոռն Տիրանին։ Երանելի Վրթանէս, իւր որդու մահից յետոյ նորա կսկծից և թէ Տիրանի վատ զործովութիւնից, շատ չի ապրում, վախճանեում է և թագւում է Թորդան գիւղում 355 թուին։ Երկրորդ տարին սորան յաջորդեց իւր որդի Յուսիկը, սորա հայրապետութեան ժամանակ, Յուլիանոս կայսրը իւր

պատկերն էր ուզարկել Տիրան թագաւորին, պատուիրելով «որ Հայոց եկեղեցում կախված էր Տիրանը կամենում էր կախել այդ պատկերը արքունական եկեղեցում, Յուսիկը դիմադրեց և ձեռքից առնելով կտոր կտոր արեց Տիրանը փոխանակ իւր սխալը ուզդելու, աւելի կատաղեց և շարաչար մահով սպանել տուեց, նորան ևս թաղեցին Թորդան աւանում, Յուսիկին 362 թ. յաջորդեց ծերունի Դանիէլ հայիսկոպոսը, սա շտանելով ո. Յուսիկի անօրինակ մահը միշտ յանդիմանում էր Տիրանին իւր անիրաւութեան համար, սորան ևս նահատակել տուեց: Դանիէլին յաջորդեց Փառներսէն, սորա ժամանակ Յունաց հետ պատերազմելով Պարսից Շասլուն թագաւորը Յուլիանոս կայսեր և մեծ զօրքով եկաւ Հայատան, Տիրանին կալանաւորեց, զերեց, աչքերը հանեց: Այսպէս Տիրանը իւր շարազործութեան պատիժն առաւ:

ՓԱ.

ՄԵԾՆ ՆԵՐՍԻՍ

Տիրանին յաջորդեց իւր որդի Արշակը,
Փառներսէհնից յետոյ, Արշակ թագաւորը նա-
խարարների և ազգի մեծամիծների ընտրու-
թիւնով և համաձայնութիւնով հայրապետ ընտ-
րեցին Յուսիկի թոռան մեծ ներսէսին 364 թ.
որը ուսում էր առել Կ. Պօլսում, նա Արշակ
թագաւորի սենեկապետն էր. Ներսէսին ուղար-
կեցին Կեսարիայի Եւսեբոս պատրիարքի մօտ
և ձեռնադրուեցաւ. Նոյն թուականին Տարօնի
Աշտիշատ քաղաքում ժողով գումարեց և կանոն-
ներ սահմանեց, և աւելորդ նորամուծութիւն-
ները դուրս ձգեց. Հայրապետական պաշտօնը
ստանալուց յետոյ, անդադար աշխատում էր.
Հիւրանոցներ շինեց, աղքատանոցներ, հիւան-
դանոցներ, ուրկանոցներ և ամեն տեսակ բա-
րեկործական օգտաւէտ հիմնարկութիւններով
զարդարեց Հայաստան աշխարհը. Այս հիմնար-
կութիւնները ապահովացրեց և իւր Խաղ սար-
կաւագին վերակացու կարգեց նոցա վերայ:
Նաև շինեց եկեղեցիներ, դպրոցներ և մենաս-
տաններ, իշխանական սերնդի համար առան-

ձին դարբոցներ հիմնեց, զանազան արհեստանոցներ և նոցա վերայ կարգեց տեսուչներ. ս. Դանիելի աշակերտներից Եպիփանին և Եփրեմին: Ներսէսը ժողովներ է անում, մտցնում էր նոր կանոններ հեթանոսութիւնից մնացած սովորութիւնները հետդհետէ վերացնում էր: Կանոնական սահմանադրութիւնով արգիլեց մերձաւոր ամուսնութիւնը, ինքը անձամբ ման էր գալիս ամեն քաղաքներում և գիւղերում և սեղանակից էր լինում ամեն դասակարգի հետ, որի համար էլ հասարակաց հայր կոչուեցաւ և մեծ Ներսէս: Մեծն Ներսէս Արշակ թագաւորի համաձայնութիւնով ժողով գումարեց 366 թ. Վաղարշապատում, ուր վճռուեցաւ, որ կաթողիկոսին աւելացնեն Պատրիարք տիտղոսը և Հայոց կաթուղիկոսը Հայոց եպիսկոպոսներից ձեռնադրուի ս. Էջմիածնում: Այդ միջոցներին Յունաց Վաղէնտիանոս թագաւորի հրամանով թէոդորոս սպարապետը մեծ գօրքով գալիս է Հայաստան աւերելու: Մեծն Ներսէս զնաց առաջ և հաշտեցրեց, և նորանով դադարեց պատերազմը: Քեաց Կ. Պոլիս Վաղէնտիանոսի մօտ, որից մեծ պատիւ ստացաւ, աղատեց Արշակ թագաւորի պատանգ եղրօր Տրդատին, նորա որդի Գնէլին և Վաղէսի քրոջը Ոլինպիադային կին բերեց Արշակ թագաւորին, Վաղէնտիանո-

սին յաջորդրց Վաղէսը, իւր քրոջ պատճառով կամենում էր Հայոց երկիրը աւերել, մեծն ներսէսը դարձեալ գնաց Կ. Պօլիս, որ խաղաղութիւն ձգէ Սրշակի և Վաղէսի մէջ, բայց Արիոսականների դրսմամբ Վաղէսի ձեռքով աքսորուեցաւ իւր մի քանի ուղեկիցներով Թուզիս կղզին, ուր մնաց ինն ամիս։ Վաղէսի մահից յետոյ 379 թ. Թէոդոս մեծի հրամանով ազատուեցաւ աքսորից և ներկայ գտնուեցաւ Կ. Պօլսի Տիեզերական ժողովին 381 թուին, ուր Մակեդոնը ուրանում էր ո. Հոգու Սստուածութիւնը։ Եյս միջոցին Սրշակ թագաւորը զերուեցաւ Զապուհից Խուժաստանի Ծնոյշ բերդը, որտեղ ինքն իրեն սպանեց։

Զապուհ տիրեց Հայոստանին ահապին վնաս հասցնելով երկրին։ Ներսէսը այս տեսնելով միջնորդեց Թէոդորոսին և Սրշակ թագաւորի Պապ որդուն թափաւորեցրեց հօր տեղի։ Ապա ինքը մեծ պատուով վերադարձաւ իւր հետ բերելով Տերինտիանոս սպարապետին բազմաթիւ զօրքով, այս պատերազմին Զապուհի զօրքը յաղթուեցաւ. պատերազմի տաք միջոցին նպատ լերան վերայ մեծն ներսէսը աղօթում էր հայերի յաջողութեան համար։ Եյս յաղթութիւնից յետոյ ուրացող Մեհրուժան Արծրունին եռտցած շամփուրէ պսակով սպանուեցաւ Սմրատ

Բազրատունի սպարապետի ձևոքով։ Պապ թագաւորը մոլի կեանք էր վարում և Մեծն ներսէսից նկատողութիւններ ստանում։ բազմախնամ հօր այդ յանդիմանութիւնը չկարողացաւ տանել Պապը և գաղտնի թունատրեց մեծն ներսէսին, Հայոց ազգը դառն կակիծով լսեց իւր երանելի հայրապետի թշուառ մահը, նորան թաղեցին թիլ աւանում։ Նորան յաջորդեցին, Ըահակ Մանազկերտցին, Զաւէն և Ասպուրակէս։

ԺԲ

**Ս. ՍԵՅՍԿ ՊԱՐԹԵՒ, Ս. ՄԵՍՐՈՎՔ ԵՒ
ՀԱՅՈՑ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՑՔ**

Ս. Մահակը՝ Մեծն ներսէսի որդին էր, Պարթևական ազգի վերջին շառաւիզն էր, սաքաջավարժ էր Յունարէն, Ասորերէն լեզուներին. և գիտութեան մեծ պաշար ունէր, վարքու բարբով գովելի։ Սա ամուսնանալուց յիտոյ մի դուստր ունեցաւ Մահականոյշ, որը ամուսնացրած էր Համազասպ Մամիկոնեանի հետ, որից ծնան Վարդան, Հմայեակ և Համազասպ Մամիկոնեաները։ Ս. Մահակը իւր ամուսնու

մահից յետոյ աղքի հաճութիւնով 380 թուին
հայրապետական գահը բարձրացաւ Ասպուրա-
կէսի տեղը։ Հայրապետական աթոռը բարձրա-
նալուն պէս՝ կարդ ու կանոններ սահմանեց,
եկեղեցիները պայծառացրեց և ինքը սքանչելի
բարոյականութեան օրինակ դարձաւ։ Ս. Սա-
հակ մի քանի հայ նախարարների քսութիւնով
ամբաստանուեցաւ և կանչուեցաւ Պարսից զու-
ռը Խոսրով երրորդի հետ։ Ս. Սահակին հայ-
րապետական պաշտօնից դադարեցրին, իսկ
Խոսրովին Ենոյշ բերդը աքսորեցին Շապուհի
հրամանով և նորա տեղը թագաւորեցրին Խոս-
րովի եղբօր Վռամշապուհուն։ Պարսից Շապու-
հի մահից յետոյ նորա որդին Արտաշիրը ո.
Սահակին թոյլ տուեց հայրապետական պաշ-
տօնը վարելու։ Այս միջոցին մեծն ներսիսի
աշակերտ Հացիկ գիւղի Վարդանի որդի ո.
Մեռովքը իմանալով ս. Սահակի հայրապետա-
կան գահ բազմիլը շտապեց զնաց նորա մօտ։
Ս. Մեսրովքը շատ զարդացած կրօնաւոր էր
Հելլենական, Ասորի և Պարսից լեզուների մէջ
խիստ հմուտ էր, և մի քանի նշանաւոր դա-
տարաններում պաշտօններ էր վարել, ինչպէս
և մեծն ներսիսի մօտ։ բայց վերջին ժամա-
նակները, երբ արդէն վարդապետ էր ձեռնա-
դրուել, առանձնացած առարինի կեանք էր

վարում, և քարոզութիւնով էր պարապում։
Ս. Մեսրովը հայկական գրեր շլինելու
սլատճառով նա շատ էր դժուարանում իւր ա-
շակերտներին Աստուածաշնչի ուսման մէջ վար-
ժելու համար, նա խոր տիարութիւնով լցում
էր Հայոց եկեղեցիներաւմ վանքերում Ասորի և
Յոյն լեզուներում և. գրքի ընթերցումը, այդ
մեծ պակասը լրացնելու բաղձանքով լցուած
դիմում է ո. Սահակին և յայտնում իւր դիտա-
ւորութիւնը, այն է հայկական տառեր գտնելը։
Ս. Սահակը սիրտ տուեց այդ գործը յաջողա-
ցնելու համար։ Վռամշապուհ թագաւորը ևս
խրախուսեց և իւր աջակցութիւնը ցոյց տուեց։
Ս. Մեսրովին յանձն առաւ գնալ Միջազետք
դիտնական Դանիէլ եպիսկոպոսի մօտ, Եղեսիա
Պղատոնի, և Սամուսատ Հռուփանոսի մօտ,
բայց ոչ որից այնքան օգնութիւն շտացաւ։
Նա շյուսահատուեցաւ, Աստուծուն դիմեց ա-
ղօթքով և նորա ցանկութիւնը իրագործուեց։
աղօթելու ժամանակ ո. Հոգու շնորհով Հայե-
րէն տռուերը նորա սրտի մէջ դրոշմուեցան և
նոյն ձեակերպութիւնը դարձան հայերէն գրեր։
սուրբ Մեսրովը փորձեց և ո. գրքից Առակներ
թարգմանել և յաջողութիւն գտաւ, ապա վե-
րապարձաւ Հայաստան և ո. Սահակի հետ միա-
սին թարգմանեցին Աստուածաշունչ գիրքը։

Այնուհետև սկսեցին տարածել դպրութիւնը և ուսումնաբանում պատահիները հայ տառերով և լեզուով կարդալ:

Երբ մայրենի լեզուի ուսումը ազատ տարածուեցաւ, ս. Մեսրովի հրաւիրուեցաւ Վրաստան Բագուր թագաւորի և Մովսէս եպիսկոպոսի խնդրանօք, նոցա համար ևս գտաւ վրացերէն գրեր, Այնտեղ թողեց Խորենացի Տիրայր և Տարոնացի Մուշէղ աշակերտներն, որ նորա տարածեն Վրաց դպրութիւն և ինքը դեպի Աղուանք, Նորանց հնչիւնների հետ ծանօթանալով՝ նորանց համար ևս հնարեց տառեր, և այնակ ևս թողեց իւր աշակերտներից երեքին Ենովը, Դանան և Ցումաթան և ինքն եկաւ ս. Սահակի մօտ և թարգմանութիւնով էր պարագում:

Երբ Վռամշապուհ մեռաւ 413 թ. ս. Սահակ գնաց Պարսից դուռը Խոսրովին ազատեց և իւր եղբօր վոխանակ թագաւորեցրեց, սակայն մի տարուց յիտոյ վախճանուեցաւ։ Այնուհետև Յազկերտ իւր Հապուհ որդուն թագաւոր կարդեց, Հայոց նախարարները սերտ բարեկամութիւն սկսեցին անել Պարսից հետ։ Նորանց սովորութիւններն ընդունեցին և մտերմացան նրանց հետ, մինչև անկամ խնամութիւն էին անում։ Իսկ երբ Յազկերտի որդի

Վռամը թագաւորեց, նա սաստիկ հայածեց քրիստոնէութիւնը: Ա. Սահակ զնաց Յունաց կողմերը 420 թ. որ այնտեղից օգնութիւն դտնի, սակայն այնտեղ ևս ատելութիւններին հանդիպեցաւ, ո. Մեսրովին ուղարկեց իւր թոռ Վարդանի հետ Կ. Պօլիս և աղաչանաց թուղթ գրեց Թէոդոս կայսեր, որ յոյն կառավարիչները արդելք շլինին նոցա գսրծունէութեան: Նոքա մեծ պատուով ընդունուեցան, և ո. Մեսրովի իւր ճարտարախօսութեան համար գերզզօն անուն ստացաւ, իսկ Վարդանը ստրատելութեան աստիճանին արժանացաւ, սկսեցին դպրոցներ բանալ ազգը մայրենի լեզուով դաստիարակել:

Վարսկաստանի բաժնից հայ Նախարարները խնդրեցին ո. Սահակին, որ կրկին այցելէ իրենց. ո. Սահակը զնաց թողնելով Յունաց բաժնում ո. Մեսրովին և Հմայեակին: Վարդանին և Սմբատ սպարապետին ուղարկեց Վռամի մօտ միջնորդելու որ և իւր փափազածին պէս թագաւորեցրեց Հայոց վերայ Վռամշապուհի որդի Ծրտաշէսին: Ա. Մեսրովի աշակերտները Կ. Պօլսում աւարտելով իւրեանց ուսումն վերադարձան Հայաստան, բերելով իրենց հետ ընտիր Աստուածաշունչ, կրկին թարգմանեցին: Եյդ աշակերտներն են — Յով-

սէփ, Եղնիկ, Դաւիթ, Ղևոնդ, Կորիւն և այլն։
Ա. Սահակ 426 թ. Վաղարշապատում ազգային
ժողով գումարեց հայ եպիսկոպոսներից եկե-
ղեցական կանոններ սահմանեց և եկեղեցական
երգերով պայծառացրեց։ Այն միջոցին խռովու-
թիւն ընկաւ նախարարների և Ծրտաշէս թա-
գաւորի մէջ, նախարարները աշխատում էին,
ս. Սահակին և իրենց հետ միացնեն և զահ-
ընկէց անեն Ծրտաշէսին Պարսիկների միջոցով։
ս. Սահակը մերժեց նախարարների առաջար-
կութիւնը ասելով «Ես չեմ կամենում իմ հի-
ւանդ ոչխարը առողջ գաղանների հետ փոխել,
որի առողջութիւնը մեղ վնասակար է»։ Նախա-
րարները փոխանակ հայրապետին անսալու,
Սուրմակ երէցի հետ զնացին Պարսից դուռը
ամբաստանեցին թագաւորին և Հայրապետին։
Ծրդարե գահընկէց արին 428 թ.։

Ծրտաշէս թագաւորի տեղ Վրամշապուհ
պարսիկ մարզպանին նշանակեցին կառավարից,
իսկ ս. Սահակի տեղ Սուրմակ էրէցին։ Սուր-
մակին իւր անկարգութեան համար շուտով հե-
ռացրին և նորա տեղ պարսիկները նշանակե-
ցին Բրիշոյ ասորուն։ Նախարարները սորանից
ևս բողոքեցին և խնդրեցին կրկին ս. Սահա-
կին նշանակել, Վռամը թէի նշանակեց ս. Սա-
հակին, միայն զմուէլ Ասորու իշխանութեան

ենթարկեց։ Երբ աղահ Շմուէլ մեռաւ, Նախարարները կրկին խնդրեցին ս. Սահակին, որ ընդունէ ընդհանուր հայրապետութիւնը, բայց նա մերժեց։ Նա գնաց Բագրեանդի Բլուր գիւղը և վախճանուեցաւ 51 տարի հայրապետթեան անխոնջ պաշտօնը վարելով։ Ա. Սահակից յետոյ 440 թ. տեղակալեց վեց ամսուայ չափ ս. Մեծրուկը և մեռաւ Վագարշապատում և թաղեցին Օշական գիւղում։ Այս միջոցին ծաղեցաւ նեստորական աղանդը, ս. Սահակի աշակերտներից ուղարկուեցին ներկայ լինելու եփեսոսի ս. Ժողովին և ներկայացրին կանոնները։

19

ՅՈՎԱՆԻՓ ԿԱԹՈՒԴԻԿԱԿԱՍ ԵՒ ՂԵՒԱԳԵՍԵՆՔ

Սր. Մեսրովին յաջորդեց Յովսէփը, որ
աշակերտ էր ս. Մահակի և Մեսրովի, Յովսէփ
կաթուղիկոսը ուշք դարձրեց եկեղեցիների և
գպրոցների պայծառութեան և յառաջադիմու-
թեան վերայ. Սորա հայրապետութեան ժամա-
նակ Պարսից Յաղկերտ թագաւորը մի քանի
յաջող յաղթութիւններից յետոյ, մողերի դրդ-

մամբ կամեցաւ Հայերին հաւատափոխ անել,
Յաղկերառը թուղթ գրեց, զովելով իրենց հա-
ւատը և պատուիրելով Հայերին և Վրացիներին,
որ ընդունեն մողական հաւատը, հակառակ
դժվարում պատասխանել: Յովսէփ կաթուղիկոսը
ժողով գումարեց Արտաշատ քաղաքում և մի
իմաստնալի պատասխան գրեց, հերքելով մո-
ղական սուս կրօնը — զովելով քրիստոնէական
ճշմարիտ կրօնը: Եյս պատասխանը կնքեցին
հետեւեալ բառերով. «Ոչինչ բան չի կարող մեզ
բաժանել մեր հաւատից, ձեր սուրը և մեր
պարանոցը»:

Երբ Յաղկերտ նախարարների և մողերի նիր-
կայութիւնով կարկաց շատ զայրացաւ նորանց
համարձեկութիւնը տեսնելով և հրամայեց Հայ
նախարարներին և մեծամեծներին արքունիք
կանչել: Յաղկերտ նախարարներին սովորական
բաղցը ընդունելութիւնը ցոյց շտուեց սաստիկ
բարկացաւ նոցա գրած պատասխանի համար,
և յայտնեց, որ եթէ այս օրուանից արեգակին
երկրագրութիւն չգար, բոլոր Հայաստանը կա-
ւերիմ և ձեզ անդարձ կարսորիմ: Նախարար
ները մտածեցին և այն եղբակացութեան եկան,
որ առ երեսս ընդունեն թագաւորի հրամանը
մինչև որ վերապառնան հայրենիք և ազգի հետ
միասին խորհեն և այնպէս զործեն: Երենց հնա-

զանդութեան որոշումը յայտնեցին թագաւորին, ծափ ուրախացաւ թագաւորը, պատուիրեց բոլորին լաւ պատուել և մեծամեծ պարզեի արժանացնել:

Թագաւորը 700 մողերով վերադարձրեց նախարարներին չայաստան որ մնացածներն ես մողական կրօնին դարձնեն: Յովսէփ կաթուղիկոսը և Ղեռնդ երէցը երբ իմացան նախարարների ուրացութիւնը պատղամաւորներ ուղարկեցին ամեն տեղ, իշխաններին և մեծամեծներին ժողովեցին և ուխտեցին, որ ուրացեալների դէմ ոչ մի զիջողութիւն չանեն և նոյն խոկ իւրեանց մերձաւորներին շխնայեն: Կանայք մինչև անգամ ուխտեցին, որ մայրը իւր ուրացեալ որդուն շխնայէ, կինը մարդուն, քոյրը եղրօրը, այլ մինչև վերջին շունչը պատերազմել: Երբ մողերը ուրացեալների հետ հասան ծաղկոտ գաւառի Անգղ գիւղարազաքը, այնտեղ հանգիստ առան: Կիւրակի օրն էր, մողերը մտան եկեղեցի, որ արգիլեն ժամերգութիւնը, Ղեռնդ երէցը հոգեորականների հետ պատարագ էր մատուցանում: Երբ մողերի այս անկարգութիւնը տեսաւ, Ղեռնդ երէցը խրախուսեց հոգեօրականներին և աշխարհականներին, ողի առան մողերին իրենց զօրքերով, ջարգելով քշեցին այնտեղից: Վասակ Սիւնին

բոլորովին ուրացել էր քրիստոնէութիւնը. այս
սպանութիւնները մոգերին շատ տրտմեցրեց և
Վասակին էր վերագրում այս զնամները, որ
գործի դրութիւնը ինչպէս հարկն էր, այնպէս
չէր հասկացրել Պարսից թագաւորին. Մոգակտը
—ասում էր թօղ գրեմ թագաւորին, որ յետ
կանգնի իւր դիտաւորութիւնից, որովհետեւ եթէ
իրանք աստուածներն էլ օգնութիւն գան մեղ,
անկարելի է հայերին հաւատափոխ անել, եթէ
անգէն մարդիկ այսպիսի ոյժ գործ դրին, ինչ
կ'ինի եթէ զինուորներն էլ իրենց հետ միա-
նան, ով է կարող նոցա դէմ կանգնել:

Վասակ յուսադրեց, Սիւնեաց երկրից զօրք
բերել տուեց, հայ փառասէր իշխաններին պար-
զեներով շլացրեց, հասարակ ժողովրդեան իշ-
խանական ոյժով վախեցրեց և շատերին էլ խըն-
ջոյքներով և զուարճութիւններով խարեց, մի-
այն հայերը զիտէին Վասակի դաւաճանութիւ-
նը: Ուստի Զահալիվան քաղաքում ժողովեցան
շատ եպիսկոպոսներ և նախարարներ, երդմամբ
ուխտեցին, որ հաստատ մնան քրիստոնէական
կրօնի մէջ, իսկ ուրացողներին ևս մոգերի հետ
պատժել, այս ուխտին հաւանութիւն չտուեց
Զահագաղան անունով մի մարդ, իսկոյն զլխա-
տեցին, այս զլխատումն ոաստիկ ազդեց ամե-
նին: Այնուհետեւ հայերը յարձակուեցին մոգերի

վերայ և քաջութիւնով շատերին կոտորեցին,
ոմանց փախցրին և մնացեալները դերեցին։
Եյս միջոցին Աղուանից լուր բերին թէ Սերուխտ
գօրավարը Պարսից զօրքով մտել է Աղուան և
աւերսւմ է։ Յովսէփի կաթուղիկոսը թուղթ գրեց
Յունաց Թէոդոս կայսեր, որ հայերին օվնէ, մինչ
թագաւորը պատրաստում էր զօրք ուղարկելու
մեռնում է, և նորա տեղը թագաւորում է Մար-
կիանոսը։ Սա, ոչ միայն չի օվնում հայերին,
այլ և դաշն է կապում Պարսից հետ, հայերի
դէմ։ Մարկիանոսի դաւաճանութիւնը չյուսա-
հատեցրեց հայերին, իրենց զօրքը երեք մասի
են բաժանում։ մի մասն Վարդանի զօրավա-
րութիւնով գնում է Աղուանք. պատերազմում է
Սերուխտի դէմ հալածում է նորան և ազատում
է Աղուանքը Պարսիկներից։ Զմեռը հասնելով
առ ժամանակ դադարեց այս կրօնական պա-
տերազմները։

ԺԴ

ՎԱՐԴԱՆԱՑ ԶՈՐԱՎԱՐՆԵՐԻ ՆԵՀԵՑՎԿՈՒ-
ԹԻՒՆԸ 451 [թ.]

Զատկական տօներին Պարսից զօրքը հա-
սել էր Հեր և Զարեանդ գաւառները, Վարդան
անմիջապէս հրաւէր կարգաց նախարարներին,
որ իրանց զօրքերով գան ժողովին Արտաշատ
քաղաքը, ուր հաւաքուեցան 60,000 զօրք: Վար-
դան սպարապետը հրահանվներ տուեց ամեն-
քին: Վարդան շտապից գնալ Պարսիկների դէմ,
որ զուցէ սահմանագլխի վերայ կարելի լինի
պատերազմը վերջացնել և այսպէսով երկիրը
պատերազմի շարիբից ազատել. սակայն պար-
սիկները արդէն հասել էին Աւարայր Տղմուտ
գետի ափին, նոցա հետն էին Յովսէփ կաթու-
ղիկոսը և Ղետնդ երէցը: Յովսէփ կաթուղիկո-
սից թոյլտութիւն ստանալով Ղետնդ երէցը
գեղեցիկ ատենարանութեամբ քարոզ խօսեց և
բացատրեց կրօնական պատերազմի մեծ նշանա-
կութիւնը և բոլորովին հոգեորեց բոլոր ժողո-
վրդեան: Նոյնպէս խօսեց գեղեցիկ ճառ Վարդան
Մամիկոնեան և յորդորեց քաջութիւնով վեր-
ջացնել այս պատերազմը մինչև վերջին շունչը:

Միւս օրը պատարագին բոլորը ճաշակուեցան և բոլոր զօրքը միաբերան խօսեցին. «Աստուած մեր մահը արդարների հետ համարի, և իւր սրդոցը անհաւատների ձեռքը չըմատնի», Մուշկան-Նիսալաւորտ Պարսից զօրապետը առաջ բերեց իւր փղերը և պատրաստուեց պատերազմի, Վարդան ևս իւր զօրքով զէմ յանդիման պատրաստուեց, Պատերազմը նետաձգութիւնով սկսուեցաւ զետի երկու կողմից. Հայերը ողերուած՝ անցան զետը և սկսեցին սաստիկ ջարդել Պարսիկներին. Այս տապնապի ժամանակ զօրքի մի մասը թուլցաւ և մասամբ զօրքի սակաւութիւնը յետ քաշուեցաւ, Պարսիկները օդուտ քաղելով՝ շրջապատեցին Վարդանին իւր ընկերներով. Ամրող օրը պատերազմելով դիւցազն ընկառ. ս, Վարդանի հետ նահատակուեցան Խորէն Խորխորունին, Արտակ Գալունին, Հմայեակ Գիմարսեանը, Ներսէ Քաջրերունին, Վահան Գնունին, Փարեկին, Արսէն և այլն. Հայերի կողմից նահատակուեցան 1036. իսկ Պարսիկներից 3544. Այսպէս այսանգամ Հայերը յաղթուեցան Պարսիկների ոյժերի առաւելութիւնից. իսկ մեացեալ հայ զօրքերը, որ առանց զօրավարի մեացին դանազան ամուր տեղերումը պատսպարուեցան և երբեմն մանր կոխներ տալով նեղում էին Պարսիկներին:

Միջին Հայաստանի բերդերը պաշարուեցն Պարսիկներից. միայն անվնաս մնացին կապոյտ լեռան ամրութիւնները, Հմայեակ Մամիկօնեան Խաղտեաց սահմանի վերայ շատ յաղթութիւններ արաւ և Պարսիկներին նեղը գցեց, նիսալաւուրտը իւր կրած մնասների յանցանքը Վասակի վերայ բարդեց, Յաղկերտը այդշտի կոտորածի պատճառով հրաման արձակեց, որ պատերազմը դադարեցնեն Հայաստանում և թոյլ տրուեցաւ, որ Հայերը աղատ կերպով իրենց կրօնը պաշտենի, բանտարկեալներն էլ աղատուեցան: Իսկ Վասակին Յաղկերտը կանչեց իւր մօտ, Վասակը ներկայացաւ Յաղկերտին և սպասում էր, որ խոստացած Հայոց թագաւորութիւնը ստանայ իրեն վարձատրութիւն իւր զաւճանութեան: Նահ ներկայացան կաթուղիկուրը, հոգեորականները և մեծամեծները: Միհրներսէն Յաղկերտի հրամանով, հարց ու փորձ արաւ ուր Յաղկերտը ներկայ էր նախարարների տուած բացատրութիւնների ժամանակ, Վասակը ևս ներկայ էր զարդարուած շրեղ պատմանշաններով:

Վասակի բոլոր գաւաճանութիւնները և խարդախութիւնները դրաւոր և թէ բանաւոր հաստատուեցաւ և ճանաչուեցաւ տէրութեան յանցաւոր, Թաղաւորը Վասակի խարդախու-

թիւնները երեսով տուեց և հրամայեց բանտարկել, նորան մեծ տաւզանքի ենթարկեց և կալուածքները արքունիս գրաւեց. Հանեցին նորա փառաւոր զգեստը մահապարտի հագուստ հագցրին, մատակ ձիու վերայ նստեցրին և ձեռքերը կտպած տարան ձգեցին խոնաւ բանտը. Այնտեղ մի քանի տարի մնալով չարաշար կերպով և դառն տանջանքով որդնալից մեռաւ զերեղմանի անդամ չարժանանալով. Իսկ Վասակի մնացեալ կալուածները նորա փետայ Վարագվաղան ստացաւ, որի պատճառով կրօնափոխ եղան աներ և փետան. Յաղկերտը խարելով կանչեց իւր մօտ բոլոր հոգեորականներին և իշխաններին, և 35 հոգու բանտարկեց. Միհներսէն և մօգերը բոլոր անյաշողութեան յանցանքը բարդեցին հայ հոգեորականների և իշխանների վերայ, ասելով թէ՝ դոցա տռաջնորդութիւնով և յորդորմամբ էին բանդում մեր մեհանները:

Յաղկերտը հրամայեց չարաշար նահատակել բոլոր հոգեորականներին. Իսկ նախարարները դեռ բանտում տանջւում էին և համբերութիւնով տանում էին ամեն տեսակ նեղութիւններ իրանց կրօնի և իրանց ընտանեաց սիրոյ համար. Իսկ նոցա կանայք իրանց ապաստանած տեղերում իրենց ձեռքի աշխատանքով

Եին ասլրում և սուրբ աղօթքում յիշում էին, որ ինչպէս սկսել էին հաւատի համար տանջուել և մինչև վերջը համբերութիւնով տանել, և իրենց աւելացած փողերը ուզարկում էին գերիներին։ Ահա այսպէս ազգի և եկեղեցու համար շարաշար նահատակուեցան հայ իշխանները և թէ ո. հայրերը։ Մնացած բանտարկեալ իշխանները 12 տարուց յետոյ ազտուեցան և գնացին իրենց հայրենիքը։ Այս պատերազմը կոչուեցաւ «Վարդանանց պատերազմ»։

ԺԵ

ԳԻՒՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԸ ԵՒ ՅՈՎՀԵՆ ՄԱՆԻԿ-
ԿՈՒՆԻ

Յովսէփ կաթուղիկոսի կամեցողութիւնով ազգը ընտրեց իրեն կաթուղիկոս Մելիտէ Մանասկերտացուն, մինչև նախարարների վերադարձը, Մելիտէն վախճանուած էր և նրա տեղ ընտրուեց Գիւտ կաթուղիկոս։ Սա աշակերտած էր ո. Սահակին և Մեսրովիին։ Քաջավարժ էր մանաւանդ Հելլենական գլուխթեան մէջ։ Գիւտի կաթուղիկոսութեան ժամանակ պարսիկ-

Ներք դարձեալ շարունակեցին իրենց թշնամութիւնը. բայց կաթուղիկոսը մխիթարում էր ժողովրդին և դիմադրում էր Պարսից վատթար վարչութեանը, նորա ջանքով խորտակուեցան Պարսից մի քանի կրակատուններ. Ռւստի մի քանի ուրացովները ամբաստանեցին Գիւտ կաթուղիկոսին և զորա համար էլ ծերունի հայրապետը կանչուեցաւ Պարսից զուռը, երբ նորան դատի հրաւիրեցին, ատեանում այնպիս զեղեցիկ և ազգու կերպով պաշտպանեց աղզը, որ բոլորը շուարած մնացին նորա ատենաբանութեան վերայ, որի համար թագաւորը մեծ պարզեներ և զրամ տուաւ, բայց հայրապետը շընդունեց ոչ մի քան. Պարսից թագաւորը շատ զայրացաւ այդ հակառակութեան համար և առաջարկեց, որ պաշտօնից հրաժարուի: Պարսկաստանի քրիստոնեանները մեծ պատիւ տուեցին հայրապետին. նոցա համար եպիսկոպոսներ, քահանաններ ձեռնադրեց, եկեղեցինները բարեկարգեց և վերադարձաւ Հայաստան:

Պերողի հրամանաւ կաթուղիկոս ընտրուեց Քրիստափոր Արծրունին և միւս տարին վախճանուեցաւ Գիւտը, 445 թ.: Քրիստափորին յաջորդում է Յովհան Մանդակունին, որա ժոմանակ, Պարսիկները յաղթուեցան Հռն-նեփթաղներից. Վաղթանկը սպանելով ուրացեալ

Վրաց թագաւոր Վազգենին, (սա էր ամուսին Վարդան Մամիկոնիան դատեր ո. Օռշանիկի, որը քրիստոնէական հաւատը չուրանալու համար նահատակուեցաւ և թաղուած է Տփխիսի Մետեխ ամբոցի եկեղեցում,) Յովհան Մանդակունու յորդորանքով Վահան Մամիկոնեանի հետ միանալով Վաղթանկը բոլոր պարսիկներին քշեցին Հայաստանից, գրաւեցին Դուին քաղաքը և Վահանը կարդուեց սպարապետ: Պարսիկները երկրորդ անգամ եկան Ստրատականից մեծ զօրքով և երասխ գետի ափին բանակեցան. Հայրապետը ոգեսրեց նախարարներին, դարձ ժողովուեցին տաճարում, երդուեցին, օրհնանք առան և դիմեցին թշնամու դէմ: Հայերը մեծ կոտորած արին Ստըրվշնասպ զօրապետին և յետ զարձան Դուին, զոհութեան մաղթանկ կատարեցին Աստծուն:

Պարսիկները երրորդ անգամ եկան Զարեւանդ գաւառը, Հայերը ժողովուեցան ուխտեցին, երդուեցին և յարձակուեցան Պարսիկների վերայ և բոլոր զօրքին յաղթեցին և մնացեալներն էլ փախցրին: Վահանի եղբայր Վարդը, որ պատանդ էր տարած Պարսկաստանում, պատերազմի ժամանակ փախաւ եկաւ Հայոց զօրքի մէջ մտաւ: Այս փառաւոր յաղթանակը մեծ ուրախութիւն պատճառեց Հայերին մանաւանդ

Հայրապետին, որը հետեալ սրտառուչ խօսքերը
արտասանեց. «Ուրախ եմ ոչ այնքան յաղթու-
թեան համար, որշափ նորա համար, որ Ես-
տուած հաշտ է մեզ հետ»։ Պատերազմը շարու-
նակում էր, բայց յաղթութիւնը միշտ Հայոց
կողմն էր։ Կաթուղիկոսը Վահան Մանդակունու
և Նախարարների համաձայնութիւնով դաշն կա-
պեցին Պարսից հետ և Մանդակունին սպարա-
պետ Նշանակուեցաւ Հայաստանի վերայ։ Այնու-
հետեւ հայրապետը, Վահան Մամիկոնեանի ա-
ջակցութիւնով կրատուները քանդեցին և աւե-
րած եկեղեցիները նորոգեցին և երգեցողու-
թիւնով պայծառացրեց։ Նաև Մաշտոց գիրքը
աւելի ճոխացրեց և ս. Էջմիածնայ տաճարի
մէջ գոհացողական մաղթանք կատարեց բոլոր
հոգիորականների և աշխարհականների հետ
միասին, Յովհանն Մանդակունին վեցամենայ
բազմաշխատ հայրապետութիւնից յետոյ վախ-
ճանւում է և նորա տեղը ազգը ընտրում է
և նորա աշակերտ Բարդէնին։

Ժ.9.

ՀՈԳԵԲՈՒՂԽ ԶԵՐԸԿԱՆՆԵՐ, ՎԵՐԴԱՊԵՏԱԿԱՆ-
ՊԵՏՄԱԿԱՆ ԳՐՈՒԾՆԵՐ

Թէպէտ Հայոց եկեղեցու լսաւառքամթիւնը
սկիզբն առաւ ո. Գրիգորից, բայց չէր կարո-
դանում ազգային ողի և կրթութիւն մտցնել
ժողովրդեան մէջ, քանի որ հայ կրթութիւնը
և գիտութիւնը մատակարարուում էր օտար լե-
զուներով և զրերով։ Բայց երբ Սահակ-Մեսրո-
փեան գրականութիւնը ծաղկեցաւ այն ժամա-
նակ ազգութիւնը կենդանութիւն ստացաւ և
հէնց այդ պատճառով է, որ հինգերորդ դարը
կոչուեցաւ ոսկէ դար։ Երբ առաջ զնաց գրա-
կանութիւնը, այնուհետև ստեղծեց և խր հան-
ճարները քրիստոնէական բարձր սկզբունքները
առաջ բերին նոր երգեր և բանաստեղծութիւն-
ներ, եկեղեցու մարտիրոսների յիշատակի հա-
մար։ Այս երգերը մտան կրօնական շրջանի մէջ
և անուանեցան շարտկաններ, մեղեղիներ, տա-
ղեր և այլն։

Ս. Սահակ և Մեսրով եղան այս կրօնա-
կան բանաստեղծութեան առաջին հեղինակնե-
րը։ Սահակ Պարթևը երգեց աւագ շարթի շա-

բարձանները, որոնք նշանաւոր են իրենց պարզ
և իմաստալից լեզուով և հանճարով. ո. Մես-
րովի երդեց Ազ ու հացից ապաշխարութեան օրե-
րի շարականները: Նոցա աշակերտներից՝ Մով-
սէս Խորենացին յօրինեց ծննդեան, Տեառնըն-
դառաջի և ո. Յարութեան շարականները, Յով-
հան Մանդակունին՝ ո. Ընտօնի, Դաւիթ մար-
գարեի և Նախավիլայի շարականները: Իսկ Կո-
միտաս կաթուղիկոսը զեղեցիկ ոճով շարադրեց
Հոխիսիմեանց շարականները և մի քանիսները.
յաջորդ դարերում ևս ճոխացրին օրինակ, Եղա-
թանկեղոսը, որը Ցրդատ թագաւորի ատենա-
գպիրն էր՝ նա զրեց Հայոց աղջի դարձը ո.
Գրիգոր Լուսաւորչի բարոզութիւնները, շար-
շարանը և զործունելութիւնը:

Փաւստոս Բիւզանդացին վսիմ ոճով զրեց
ո. Գրիգորի յաջորդների, մեծն ներսիսի գոր-
ծունելութիւնը: Բանաստեղծ-պատմիչ մեղրածո-
րան Եղիշէն, որն որ Վարդանանց կրօնական
պատերազմի անցքերը յօրինեց, որ ոչ մի հա-
յադէտ չի կարող կարդալ այդ պատմութիւնը
առանց ոգեսրուելու: Յայց որ աւելի մեծ նշա-
նակութիւն ունի մեզ համար, այն անմահ
Մավոչս Խորենացու պատմութիւնը: Այս պատ-
մութիւնը սկսում է մեր աղջի պատմութեան
սկզբից մինչև արշակունեաց թագաւորութեան

անկումը, և վերջանում է մի սրտառուշ ողբով։
Այս պատմիչներն ես ունին կրօնական գրուած-
ներ՝ իբրև բարոյական խրատական պատմու-
թիւններ, որոնք ասւում են ճառեր, դորանք կար-
դացւում են եկեղեցում հանդիսաւոր օրերում։
Օրինակ ս. Եղիշէն ունի գրուած Վարդավառի
ճառը, որ եռյն երեկօյեան է կարդացւում եկե-
ղեցում։ Վեցերորդ դարից սկսեալ մեր ուստ-
մագիրները շատ ցաւալի կերպով են նկարա-
գրում, թէ կրօնական և թէ ազգային անցքե-
րը, մի կողմից դարաւոր թշնամի պարախինները, միւս կողմից ոխերիմ թշնամի Յոյները, Հռով-
մայեցիր, արարացիր և այլն և այլն։ Ամեն կող-
մից սորա հայերին նեղեցին, նահատակեցին,
աւերեցին և ամեն կերպ աշխատում էին մեր
կրօնը և լիզուն ոչնչացնել։ Այդ բաւական չէր
ընտանի ոսոյսներն էլ միւս կողմից թշնամի-
ների զրդմամբ անսպակաս էին. եղբայրը եղբօր
գէմ, ազգը ազգի գէմ. այսպիսով այլես ազգը
չկարողացաւ իւր նախկին փառքը և պատիւը
երկար վայելել, Բնական էր, որ այսպիսի մի
ժամանակ գրականութիւնն էլ չէր կարող յա-
ռաջ գնալ, քանի որ անսպատ ձեռքը և կեան-
քը տիրում էր Հայաստանին։

ԺԵ

ՆԵՐՄԵՍ ՃՆՈՐՀԱԼԻ

Վեցերորդ դարից սկսած մինչև տասներորդ դարը մեր թագաւորների և հայրապետների զործունէութեան ասպարէզը շատ նեղէր և թէ անտանելի, թշնամիները իրենց արշաւանքով և նենգութիւնով հանգիստ չէին թողնում, որ նորա կարողանային որեւէ զործունէութիւն ցոյց տալ. Ամեն կողմից պատերազմում էին, աւերտում մեր երկիրը, կողոպտում և շատ զրկանքներ էին տալիս հայերին. Պէտք է ասել, որ մի առ ժամանակ Հայաստանը շունչ քաշեց Ռուբենեանց թագաւորութեան ժամանակ, որը միջոց տուեց մի քանի հայրապետներին՝ ազգին համար օպտակար և բարելաւ զործունէութեան, այն է — 1166 թ. Քրիստո Պահաւունի հայրապետը հասնելով խորին ծերաթեան, ժողով է անում Հռոմելայում և ազգի հաւանութիւնով իսր տեղ ձեռնադրում է իւր եղրօր Ներսէսին. Երեք տարուց յետոյ Քրիստո Պահաւունին վախճանուում է Հռոմելայում. Սորա ժամանակ հարց զարթեցաւ Հայոց եկեղեցու միութեան Յունաց հետ. Ա. Ներսէս

Կլայեցին՝ իւր իմաստուն և քաղցրախօսութեան պատճառով անուանեցաւ չնորհալի։ Սա իւր վարք ու բարքով և ընատուր չնորհքով ազգի ցաւերը բուժեց, գերազանց գտնուեցաւ նաև գիտութեան և իմաստութեան մէջ, մանաւանդ իւր նախորդների կեանքը և դրութիւնը ուսումնասիրելով, որ օտարներից ազգը և եկեղեցին մեծ վեասներ էր կրել և խանգարուել էր Հայոց գարաւոր խնկելի աւանդութիւնները։ Նաև զղալով և տեսնելով հմուտ հոգեոր մշակների բացակայութիւնը, հոգ տարաւ և պատրաստեց գիտնական հովիւններ կարգել զանազան քաղաքներում և գիւղերում։

Ամեն գասակարդի յարմար խրատական կոնդակներ զբեց, Աստուածային իմաստութիւնով լի և իրքն հովուական խրատ բոլոր հոգեորականներին և աշխարհականներին առանձին առանձին, որը զբուած էր քաղցր և աղդու սճով, որ կոչւում է «Ընդհանրական» գիր։ Նորա բովանդակութիւն էր սէր, միութիւն ազգի և եկեղեցու, կարդ, կանոն, ծեսերի, ապարագութեան։ մանաւանդ յօրինեց երդեր և հոգելից շարականներ, ճառեր, ողբերդութիւններ, ոտանաւորներ և մեկնութիւններ։ Նաև զրեց Ցիստս որդի զիրքը։ Ներսէս Ցնորհալին քանի որ այսպիսի օգտաւէտ զործերով էր

գրադուած, Յունաց Կիռ-Մանուէլ կայսր թուղթ
էր ուզարկել Ներսէս Ծնորհալուն, որ Հայոց
եկեղեցին միացնեն Յունաց եկեղեցու հետ:
Ծնորհալին կարդալով կայսրի թուղթը, ուզա-
կի պատասխանեց թէ՝ «Հայերը հեթանոսնե-
րից այնքան նեղութիւն ու զրկանքներ չեն
կրում, որչափ Յոյներից, որ դէմ է խղճի և
կրօնի»: Կայսր իւր պատրիարքի հետ խորհր-
դակցելուց յետոյ, երկու Ըստուածաբան պատ-
գամաւորներ են ուզարկում Ծնորհալու մօտ,
երկար խօսակցութիւնից յետոյ, Ներսէսը նոցա
ձեռքով թուղթ է ուզարկում կայսրին որի մէջ
բացատրուած էր մեր եկեղեցու գաւանութիւնը,
Նախնեաց աւանդութիւններն և մանաւանդ մեր
հաւատի ճշմարտութիւնները:

Կիռ-Մանուէլը կարդալով գարձեալ պատ-
գամաւորներ է ուզարկում Ներսէսի մօտ, որի
մէջ զրուած էր ինն առաջարկութիւններ, որ
Հայերը ընդունեն, այն է ծեսերը միացնել ի-
րենց եկեղեցու հետ և անկախութիւնը գերա-
ցնել: Այս անգամ Ծնորհալին պատասխանուած
է որ մի այզպիսի եկեղեցու փոփոխութիւնը,
իւր և Կիլիկիայի հոգևորականների գործը չէ,
և սորանց ժողովով չի կարելի համաձայնու-
թիւն կայացնել մեր մէջ, եթէ չմասնակցեն
Արեելեան և այլ տեղերի հայ հոգևորականների

և աշխարհականների դասը։ Այս թուղթը ուղարկում է պատգամաւորների ձեռքով, իսկ ինը ըստ հրաւիրում է Արեելիան հոգիորականներին և տեղականներին։ Դեռ հարցը չվճռուած Ծնորհալին վախճանում է եօթնամեայ կաթողիկոսութիւնից յետոյ 1173 թուին։ Ծնորհալու մարմինը բաւական ժամանակ անժաղ պահեցին, սպասելով նորա եղրօր որդի Գրիգորին։ Նորա գալուն պէս մհծ վառքով և պատուով կատարում են նորա յուղարկաւորութիւնը, և թաղւում է իւր ծննդավայր Հռոմկլայում։

ԺԼ

ԳՐԻԳՈՐ ԿԸԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ ՀԵՅՈՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԱՆԱԼԸ

Ներսէսի թաղման երկրորդ օրը, Գրիգորին ընտրում և օծում են կաթուղիկոսն։ Յունաց կայսր և պատրիարքը Ծնորհալու մահուան լուրը լսելով՝ մխիթարական թուղթ են զրում նոր կաթուղիկոսին և միևնույն ժամանակ կրկնում են միութեան խնդիրը և նոյն առաջարկութիւնները։ Գրիգոր կաթուղիկոսի թղթերը կարդալով, զիտէր, որ այդ առաջարկութիւն-

Ները կատարուելու չէին և թէ այդ առաջարկութիւնները ընդունուեր ազգը պիտի տուժէ։ Այդ միջոցին Արեւելան հայ հոգեորականների պատասխանները ստանում է, որը Ծնորհալին էր զրել։ Սոքա իրենց կարծիքների մէջ նաև յիշել էին թէ՝ «Մէրն մեր երկնաւոր Հօր պատուիրն է, մենք քրիստոնեաներս պիտի սիրենք միմեանց, բայց Յոյները թող շաշխատեն, որ մեր նախնի աւանդութիւնները փոխեն և եկեղեցու անկախութիւնը վերացնեն։ Եյս հիման վերայ կաթուղիկոսը պատուիրում է ներսէս Լարրոնացուն, որ մի աղգու պատասխան գրէ։ ոս այն ժամանակ լեզուազէտ և կտրիչ եպիս կոպոս էր։

Կայսր պատասխանը ստանալով տեսնում է, որ հայերը մերժում են իրեն առաջարկութիւնը կայսր կրկին անդամ գրում է, որ հայերը համաձայնուին, այս զրագրութեան միջոցին Յունաց կայսր մեռնում է և խնդիրը մնում է անկատար, Եյս դեռ չվերջացած միւս կողմից լատինացիք սկսեցին քսութիւնով և կեղծաւորութիւնով մօտենալ հայերին. Կոէմես պապը պատուաօիրական նամակներ էր զրում և մհծ պարզեներ էր ուղարկում Գրիգոր կաթուղիկոսին և Լիոն Հայոց իշխանին, որ օպնեն Գերմանիայի Գրեգերիկոս կայսրին, խաչակ-

բաց պատերազմի ժամանակ Նրուսաղէմը գրաւելու: Հայերը հասցնում էին զանազան նպաստներ և օգնութիւն կայսրին: Փրեդերիկոսը մեծ շնորհակալութիւն է յայտնում հայերին և մեծամեծ խոստումներ է անում, սակայն չուտով վախճանեռում է և խոստումները չի կատարւում. և ազգը փոխանակ օգտակար լատինացիներից մեծ վնասներ է կրում: Կիլիկիայի Հայոց թագաւոր Լեռն 6-դը, ազգականութիւն և բարեկամութիւնները Եւրոպացիների հետ, ազգին մեծ հարուած տուեց: 1374 թուին Եղիպտոսի Հարան Սուլթանը տեսնելով Հայոց յարարերութիւնները Եւրոպացիների հետ, իւր եղրօրը մեծ զօրքով ուղարկեց Կիլիկիա, որ միանգամյն վերջ տայ հայ իշխանութեան:

Լեռն անպատճառտ էր, թշնամին հասաւ Հայոց երկիրը աւերեց Աղանա, Տարսոն, Սխա և այլ շատ քաղաքներ բոլորը դատարկաւեցան մինչև 60,000 հոգի գաղթեցին Վրաստան, Աղուանք, Ասիա և այլ տեղեր, շատերին կոտորեցին և ոմանց գերեցին. 1375 թ. Լեռն թագաւորին գերեցին Եղիպտոս և մի կերպ Սպանիայի թագաւորը գերութիւնից աղատեց, զնաց դէպի Եւրոպայի քաղաքներ շատերից օգնութիւն խնդրեց, որ իրա իրաւունքը պաշտպանեն, ըայց ոչ մի իրոպական տէրութիւնը ուշ շդարձրեց,

երկար աշխատելուց յիշոյ 1393 թուին վախ-
ճանւռմ է Փարիզում և թաղւռմ է Կեղիստի-
նա վանքում, որի գերեզմանի վերայ դրած է
մարմարեաբար. Որով վերջացաւ Հայոց Թու-
րինեանց թագաւորութիւնը. Այսպէս չորս ան-
գամ Հայոց թագաւորութիւնը հաստատուեցաւ,
այն է Հայկաղանց իշխանութիւն, Երշակուն-
եանց թագաւորութիւն, Բագրատունեանց և
Ռուբինեանց:

Այնուհետև թշնամիները աւերեցին Հայա-
տանը և քանի միլիոն ժողովուրդը քիչ մեաց
որ բոլորովին անհետահայ. այժմ մեռում է մին-
չև հինդ միլիոն Հայ:

Մեր նախնիքը հաւատի համար ամեն քան
զոհեցին, ամեն տեսակ զրկանքներ կրեցին և
մեզ յիշապաներիս թողին կրօն և լիզու. Հա-
յերը մահից ազատուելու համար ստիպուած
զավթեցին, ուստի այժմ Հայ մեծամանութիւ-
նը տարածուած է զլխաւորապէս Օսմանեան,
Ռուսաց և Պարսից երկրում. Իսկ փորբամա-
նութիւնը համարեա թէ բոլոր երկրագնդի վե-
րայ զտնուամ է ամեն տեղ պահպանուած է
կրօն և լիզու, ունելով Հայ եկեղեցի և կպրոց.

Ժ.Թ.
ԱԾՐԲԵՑԻ ՑՈՎՀԵՆՆԵՍԿԱԿՄԱՆԴԻԿՈՍՐ ԵՒ ՀԵՅՈՅ
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՄԵՑ ՀԵՏ

Դեռ քանի որ Ռուսները իրանց երկրում
մի քանի իշխանութիւնների էին բաժանուած
11-րդ դարում, երբ Կիևի Ըղէքսանովը իշխանը
Լեհաց գէմ պատերազմում էր, չայոց օդիու-
թեան դիմեց, չայերը նրա հրաւէրը յարգեցին
1060 թ. Կիևում հայերը զանազան պաշտօն-
ներ ունեին և թէ վաճառականութիւնով էին
պարապում, ունեին քարաշէն եկեղեցի. իսկ
երբ Ռուսաց զահի վրայ բազմեց Կատարինէ
2-դը 1762 Ռուսաստանի անդնակ տեղերը հայ
զաղթականներով լցրեց. 1779 թուին, քանի
որ Խրիմը դեռ Օսմանցոց ձեռքն էր, կայսրու-
հու հրաւէրով 15,000 հազար հայեր զաղթե-
ցին և եկան Դօն զետի մօտ բնակութիւն հաս-
տառեցին, անուանելով Նոր-Նախիջևան, զա-
նազան արտօնութիւններ ստացան, իրենց հա-
մար առանձին զատարաններ ունեին:

Այնուհետև հայերը պաղթեցին դէսի Աշտարխան, Ղղլար, Մողկոկ և շատ զիւղերում բնակուցան։ Այն ժամանակ Բեսարաքիայի ա-

ոաջնորդն էր Յովսէփի եպիսկոպոս Արդութեան, ոա ամեն կերպ աջակցում էր հայ ժողովրդեան։ Երբ որ Վրաց շերակլ թագաւորը կամենում էր յանձնել իւր երկիրը Թուռաց հովանաւորութեան, Պարսից շահը զայրացաւ և մեծ զօրքով եկաւ Վրաստան երեք օրում աւերեց և 12,000 հայ գերեց, իսկ մնացեալները գաղթեցին դէսլի Թուսաստանի կողմերը։ Ահա այսպէս Վրացիք պատերազմում էին պարսիկների հետ, մէջտեղը հայերն էին վնասում, Օսմանցիք էին պատերազմում հայերն էին տուժում, Ասներն էին պատերազմում հայերն էին աջակցում և ամենայն հաւատարմութեամբ ծառայում։ 1830 թ. Կարինի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը 20,000 հայ գաղթեցրեց և բնակեցրեց Ախալցխայ, Ախալքալաք, Ալէքսանդրապոլ և իրենց շուրջ գիւղերում։ Թուսաստանը Հայաստանի մի մասին տիրելով, որի մէջ գտնուում էր և ս. Էջմիածինը, հարկաւոր համարուեցաւ Թուսահայոց եկեղեցական վարչութեան համար առանձին կանոններ սահմանել։ Յովհաննէս կաթողիկոսի օրով խմբագրուեցաւ մի կանօնադրութիւն (պօլօժենիա) վաւերացրած կայսրից 1836 թ.։ Այս օրէնքի զօրութիւնով Թուսաստանում Հայոց եկեղեցու ծէսերի և կանոնների գերազոյն տեսչութիւնը և անթերի կատարման իրաւունքը

վերապահուած է ս. Էջմիածնի կաթուղիկոսին,
իբրև գլուխ եկեղեցու։

Հայրապետը ընտրւում է Մայր Աթոռի
տաճարում մեծ ժողովի ընդհանուր հայ ազգի
պատգամաւորների մասնակցութիւնով, ընտրւում
են երկու թեկինածու և նրանցից մինն հաս-
տատւում է կայսրից։ Խւրաքանչիւր թեմում
մի ատեան կայ (կոնսիստորիա) որի ատեանա-
պետն է թեմակալ առաջնորդը և շորս անդամ-
ներ հոգեորականներից։ Ծուսաստանի հայ թե-
մերը ունին մի քանի հոգեոր կառավարութիւն-
ներ, որոնց նախանդամն է յաջորդն երկու հո-
գեորականներով։ Ս. Սինօդն հսկում է բոլոր
թեմերի վրայ, թեմակալները խւրաքանչիւր տա-
րի հաշիւ են տալիս իրենց գործունէութիւն-
ների համար։ Պօլօժենեայի գորութեամբ Ծու-
սաստանում լից թեմ կայ։ 1, Բեսարարիայի
2, Աշտարիսանի 3, Երեանի 4, Վրաստանի
5, Ջամախի 9, Ղարաբաղի։ Այս վեց թեմերը
ունին թեմական գալրոցներ։ Հին Զուղայեցի
Լաղարեանները գալիս են Ծուսաստան և բա-
ցում են իրանց հաշով մի ճեմարան, ուր դաս-
տիարակւում են հայ երիտասարդները և դպրոցը
ապահովում են։ 1818-ին Յովակիմ Լաղարեանն
է հիմնում Մոսկուայում այս ճեմարանը, որից

զուրս են զալիս մինչեւ այժմ զիտնական և լեզ-
ուագետ հայեր։

ԻԱ.

ՆԵՐՍԻՍ և ՊԼԹՈՒՂԻԿՈՍԻ

Ներսիս Խոլիսկովոս Աշտարակեցին, զեռ
քանի որ Վրաստանի տռաջնորդ էր, տեսնելով
ժողովրդի մէջ հայ լեզուի բացակայութիւնը,
նրա տռաջին հոգս եղաւ դպրոց հիմնել, ուս-
տի ժողովրդին յորդոր կարդաց և կարճ միջո-
ցում 1825 թուին կառույց մի հոյակապ շինու-
թիւն դպրոցի համար, որից աղջր մինչ ցայ-
սօր յառաջադիմեց։ Դպրոցը ապահովուեց կտ-
լուածներով և զլխաղբամով։ Ներսիսը դպրոցի
տռաջաղիմութեան համար, Փարիզից Շահան-
ջրպետ զիտնականին հրատիրեց իրրե հայկարտ-
նութեան ուսուցիչ։ Մոսկովից Լազարեան ճե-
մարանի ուսուցիչ Ալամզարեան վարդապետին
իրրե կրօնուսույց և այլ զիտնական պատուառ
անձանց, և կարճ միջոցում մինչեւ 400 աշ-
կերտներ ժողովեցան։ Բոլորն էլ ձրի են ուսու-
նում, մեծ մասն հոգերականաց որդիք են»

Դպրոցի հիմնելու նպատակն էր ազգին ընտիր անդամներ պատրաստել և հմուտ հոգեորական ներ։ Սակայն զեռ դպրոցը բոլորովին կարդի շրերած՝ յանկարծ ներսէսը Բեսարապիայի առաջնորդ նշանակուեցաւ։

Բայց զործունեայ անձն ամեն տեղ ևս կը զօրծէ, ներսէս առաջնորդը այնուն ևս կալուածներ շինեց, և ազգի համար մեծամեծ տրդեանց ազրիւներ աւելացրեց։ Յովհաննէս կամուղիկոսի մահուանից յետոյ ազգը ի նկատ ունենալով նրա օպտաւէտ զործունէութիւնն կամուղիկոս ընտրեց 1843 թուին։ Երբ որ օդուեցաւ, նրա զործելու ասպարէզը մեծացաւ մանաւանդ աւելի ուշադրութիւն դարձրեց Տփխիսիսի դպրոցի վրայ, որ յետոյ կոչուեցաւ «Ներսիսիան հոգեոր դպրոց»։ Այն օրից սկսեալ մինչեւ ցայտօր շատ օպտակար և պիտանի վարդապետներ, քահանաներ, ուսուցիչներ և այլ պաշտօնների երիտասարդներ են զուրս եկել։ Ս, եջմիածինը բարեկարդեց և մի մեծ լիճ շինել տուեց, որից յետոյ մի մեծ անտառ անկեց պլողատու և անվառուզ ծառերով որբ, թէ օդը մարրեց և թէ եջմիածնի շինութիւններուն փալու և տպիս թէ այրելու և թէ շինութեանց։

Են առ սահմանը զիմուստը մայումն ուսումնական գործունութեան առաջնայի ուն ու նաև նաև նաև

ԻԲ

ՄԱՏԹԵՈՍ, ԳԵՈՐԳ ԵՒ ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻ-
ԿՈՍՆԵՐԸ

Ներսէս Աշտարակեցին 14 տարի վարեց
հայրապետութիւն։ 1857 թուին վախճանուեց
Տփխիսում և թաղուեց ո. Էջմիածնի դրան աջ
կողմ. հայ ազգը նրա երախտիքը ճանաչելով
նրա տապանաքարի վրայ դրոշմում է «Պաշտ-
պան Հայրեննաց»։ Նրա յիշատակը յաւերժա-
ցընելու համար Տփխիսի ներսէսեան դպրոցի
վարչութիւնը ամենայն տարի փետրվարի 14-ին
նրա անուան հոգեհանգիստ է կատարում։

Նրան յաջորդում է Մատթէոս կաթուղի-
կոսը 1858-ին որը երրեմն Կ. Պօլսի սլատրի-
արք էր։ Նրա ժամանակ ներսիսեան դպրոցի
հոգարարձութեան մլ.ջ խռովութիւն ծագեց,
ուստի նոյն դպրոցի համար նոր կանոնադրու-
թիւն հաստատեց հոգարարձական։ 1865 թուին
վախճանուեց և նրան յաջորդեց Դէորդ՝ Դ. կաթո-
ղիկոսը։ Սա օծուելուց յետոյ շրջեց ամբողջ հայ
վիճակային թեմերը, և վերադարձից յետոյ եկե-
ղեցական ծխական դպրոցներ հիմնեց, ո. Էջ-
միածնում մի մեծ շինութիւն կառոյց անուն

ճեմարանի, և տմեն երկրից մանուկներ ժողովեց ազգն ու եկեղեցին կրթուած անդամներով առաջ տանելու:

Մեր եկեղեցու ժամակարգութիւնը բարեգարդեց, հայկական նոտաներով շարականներ տաղարաններ տպագրեց և «Արարատ» ամսագիր հրատարակեց։ Տասն և վեց տարի պաշտօն վարելուց յետոյ 1882 թուին վախճանուեցաւ։ Սրա մահից յետոյ կաթողիկոսական ընտրութիւնը երկու անդամ եղաւ, առաջին անդամ ընտրուեցաւ ներսէս պատրիարք Վարժապետականը և Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեանը, ու ակային ներսէսը իւր տկարութեան պատճառաւ հրաժարուեց, ուստի երկրորդ անդամ ընտրուեցան կրկին Մ. Մուրատեանը և Մակարը. և վերջինը հաստատուեցաւ 1886 թուին։ Երբ Մակարը օծուեցաւ, այս միջոցին մեր ծխական դպրոցները փակուած էին և տէրութիւնը պահանջում էր, որ եկեղեցական դըպրոցները լինին միայն երկդասեան, նոյն թուին այդ դասընթացով բացուեցան, և հինգ տարի ո. էջմիածինը կարդ կանոնի մէջ դրաւ և լաւ կարգապահութիւն էր տիրում։ Եւ վախճանուեցաւ 1891 թուին ո. էջմիածնում։

ԻԳ

ՆԵՐԿԱՅԱ ԱԶԳԻ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՃԱԿԸ

Տաճկաստանի հայերը թէե ունին երկու կաթողիկոս Սիօնի և Աղթամարի, սակայն միայն իրենց թեմերի մէջն ունին իրաւունք. Նաև երկու պատրիարք ո. Երուսաղէմի և Կ. Պօլսու. պատրիարքները ընտրւում են ազգից և Սուլթանը հաստատում է. Կ. Պօլսոյ պատրիարքին են ենթարկում բոլոր թեմերը որոց թիւը հանում է 30-ի. Տաճկաստանի հայերը ունին Սահմանադրութիւն. որն 1860 թ. հաստատուեցաւ և Խրիմեան Հայրիկի օրով կրկին քննուեցաւ.


Երբ որ պատրիարքական աթոռի վրայ բազմեցաւ Հայրիկը, լուրջ ուշադրութեան առնուեցան Հայաստանի գաւառներում ընակիչների կրած նեղութիւնները և հրապարակական ըննութիւնների ենթարկուեցան ընդհանուր աղդային ժողովում: Յայտարարում է, որ երկու տեսակ հարստահարիչներ կան Հայաստանում, նախ հայ աղաները, որոնք հաստրակ ժողովը դին կեղերում են, երկրորդ՝ որոնք հայարնակ դիւզերի վրայ տաճիկ պաշտօնեաները ծանր պահանջներով հարստահարում:

Հայրիկը մի ընդարձակ տեղեկագիր է պատրաստում, որի մէջ քրդերի բարբարոսութիւն և պաշտօնեաների զեղծումները մի առ մի ցոյց տուեց և միջոցներ առաջարկեց բարեկարգելու Սրա օրով ժողովրդի միջին դասի ազդեցութիւնը զօրացաւ ազգային գործերի մէջ, մինչդեռ առաջ ամիրաների ձեռքին էր. 1873 թուին պատրիարքութիւնից հրաժարուեցաւ. և երբ տաճկական վերջին պատերազմ ծագեցաւ և երբ Սան-Ստեֆանոյի 16-րդ յօդուածը Հայաստանի մասին չիրագործուեցաւ և երբ Բերլինում Վեհաժառով գումարուեցաւ, ուր առաջնակարգ երուպական տէրութիւնների զլիսուոր նախարարները փոխադարձ համաձայնութիւնով մի նոր դաշնադրութիւն խմբագրեցին և երկու պատերազմող կողմերին ընդունել տուին. Նոյն միջոցցին Կ. Պոլսոյ պատրիարքը Խրիմեան Հայրիկին ուղարկեց Բերլին, որ Տաճկահայոց բարենորոգութեան խնդիրն էլ Վեհաժողովի խորհրդածութեան ենթարկուի. Ուստի երբ ներկայացաւ Խրիմեանը Խորէն նարրէյ եպիսկոպոսի հետ, դրաւոր ներկայացրին Վեհաժողովի, հայ ազգի վշտերը:

Վեհաժողովը արդացացի գտաւ Հայոց պահանջը. Անզիացի ներկայացուցիչ Սալիսբիւրին նպաստեց Հայոց համար ասելով թէ «պէտք է

պահպանել Հայոց շահերը և յառաջադիմութեան միջոց տալ նոցաւ։ Եյս յայտարարութեան վրայ Վեհաժողովի հաւանութիւնով խըմբագրուեցաւ դաշնադրութեան 61-րդ յօդուածը որէ, «Բարձրագոյն Դուռը յանձնէ առնում անյապաղ իրացնել այն բարւորումները, որ պահնջում են տեղական պիտոյքները Հայոց բնակած նահանգների մէջ, և երաշխաւորել նոցա ապահովութիւնը Զէրբէզների և քրդերի գէմ, բարձրագոյն Դուռը այս նպատակի համար ձեռք առնուած միջոցները պարբերապէս պիտի ծանուցանէ տէրութիւններին, որոնք պիտի հրսկեն գործադրութեան։ Եյսպէսով Եւրոպան Հայստանի բարենորոգութեան խնդիրը իր հսկողութեան է առնում։

Մակար կաթողիկոսի մահից յետոյ, ընտրուեցաւ միաձայն Խրիմեան Հայրիկը և Կ. Պօլսոյ պատրիարք Իզմիրիեանը 1893 թուին յունիսի 10-ին կայսերը հաճել էր հաստատել Հայրիկին ամենայն Հայոց կաթողիկոս։ Մեծ փառքով ու պատուով հասաւ ս. Էջմիածին և օծուեցաւ նոյն թուին Վարագայ Խաչի տօնին։ Ռւստի մաղթենք առ Աստուած, որ տայ երկար կեանք և առողջութիւն, որ խաղաղութիւնսով կառագարէ Հայոց եկեղեցին և ազգին ամէն։



ԺԵ. Գիւտ կաթողիկոսը և Յովհանն Մանդակունի	49
ԺԶ. Հոգեբուխ շարականներ և պատմական գրաւածներ	53
ԺԷ. Ս. Ներսէս Շնորհալի	56
ԺԸ. Գրիգոր Դ. կաթողիկոսը և Հայոց իշխա- նութեան վերջանալը	59
ԺԹ. Կարքեցի Յովհաննէս կաթ. և Հայոց յարա- բերութիւնը ռուսաց հետ	63
Ի. Ներսէս Ե. կաթողիկոս աշտարակեցի . . .	66
ԽԱ. Մատթէոս, Գէորգ և Մակար կաթողիկոսները	68
ԽԲ. Ներկայ աղդի և եկեղեցու վիճակը	70

[504-7]

A —
5609

ՎԱՃԵՑԻՈՒՄ ԵՆ ԻՄ ԵԽ ԲՈԼՅԹ ԴՐԱՎԱՇԱԽԵՐԻ ՄՕՏ

ՈՒ. Կ.

Համառօտ քարողներ	1 —
Քրիստոնէական վարդապետութիւն	— 20
Խօսակցութիւն օրիորդաց մէջ	— 10
Համառօտ եկեղեցան պատմութիւն	— 30